«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ»
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ

Բառերի ձևաիմաստային խմբերի (հոմանիշ, հականիշ բառեր) ուսուցման մեթոդաբանությունը տարրական դասարաններում

ԱՌԱՐԿԱ	Հայոց լեզու
ՀԵՂԻՆԱԿ	Լիանա Լյովայի Մարդոյան
ՄԱՐԶ	Շիրակ
ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ	«Գյումրու «Ֆոտոն» վարժարան» ՊՈԱԿ

ԲԱՌԵՐԻ ՁԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ (ՀՈՄԱՆԻՇ, ՀԱԿԱՆԻՇ ԲԱՌԵՐ) ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐՐԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆՆԵՐՈՒՄ

ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ

Աշխատանքում ուսումնասիրել ենք հանրակրթական դպրոցի մայրենիի ուսուցման գործընթացում բառերի ձևաիմաստային խմբերի՝ հոմանիշների, հականիշների ուսուցման մեթոդաբանությունը կրտսեր դպրոցում:

Առաջին գլխում անդրադարձ ենք կատարել հոմանիշների և հականիշների ուսուցման առանձնահատկություններին, մեթոդներին՝ որպես կապակցված խոսքի կարևորագույն պայման: Հոմանիշների և հականիշների ուսուցումը նպաստում է ոչ միայն բառապաշարի համալրմանը, այլև ստեղծագործական գործնական կարողությունների, վերլուծական հմտությունների դրսևորմանն ու զարգացմանը:

Երկրորդ գլխում քննության առարկա ենք դարձրել բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցման հիմնախնդիրը տարրական դպրոցում: Այդ նպատակով ուսումնասիրել ենք «Մայրենիի» դասագրքում հոմանիշ և հականիշ բառերի ուսուցման առանձնահատկությունները: Կրտսեր դպրոցի ուսումնասիրության ենթակա «Մայրենիի» դասագրքում հոմանիշների և հականիշների ուսուցումն իրականացվում է տարբեր թեմաներով բնագրերի ու բազմատեսակ առաջադրանքների միջոցով, որոնց շարքում հատկապես առանձնանում են բնագրի շուրջ կատարվող բառային և տեքստային առաջադրանքները: Բնագրի ընթերցումն ու լեզվական գիտելիքի հաղորդումը նպաստում են աշակերտի խոսքի, ստեղծագործական ու ճանաչողական ունակությունների զարգացմանը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 4

ԳԼՈՒԽ 1. ԲԱՌԵՐԻ ՁԵՎԱՒՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ 7

1.1 Հոմանիշ և հականիշ բառերի ուսուցումը որպես կապակցված խոսքի ապահովման պայման 7

1.2 Հոմանիշ և հականիշ բառերի ուսուցման մեթոդաբանությունը …… 16

ԳԼՈՒԽ 2. ԲԱՌԵՐԻ ՁԵՎԱՒՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ (ՀՈՄԱՆԻՇ, ՀԱԿԱՆԻՇ) 27

2.1 Հոմանիշ բառերի ուսուցումը տարրական դասարաններում 27

2.2 Հականիշ բառերի ուսուցման առանձնահատկությունները տարրական դասարաններում 34

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 39

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ.....41

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Կրտսեր դպրոցականի խոսքի զարգացումը մայրենիի ուսուցման կենտրոնական հարցն է[1]: Խոսքի միջոցով աշակերտը զգայական ճանաչողության սահմանափակ հնարավորությունից անցում է կատարում տրամաբանական մտածողությանը: Մայրենի լեզվի ուսուցումը սկսվում է բառապաշարի հարստացումից, որը շինանյութ է տալիս լեզվին, հիմք դառնում նրա հետագա զարգացման ու հարստացման համար: Մայրենի լեզվի ուսուցման հիմնական նպատակներից մեկը աշակերտի մեջ խոսքի մշակույթի զարգացումն է, քանի որ առանց մայրենի լեզվի տիրապետման հնարավոր չէ պատկերացնել երեխայի կրթությունն ու դաստիարակությունը: Աշակերտի խոսքի զարգացումը մայրենի լեզվի կրտսեր դպրոցի դասընթացի հիմնական նպատակներից մեկն է: «Կարդալու և գրելու ուսուցումը, ճիշտ է, երեխայի մեջ գործնական ունակությունների զարգացման որոշակի նպատակ ունի, սակայն վերջին հաշվով դրանց ուսուցումը ևս բացարձակապես ինքնանպատակ չէ, դրանք ևս միջոց են խոսքի զարգացման խնդիրների իրականացման համար»[2]: Կամ, ինչպես նշվում է, «առհասարակ ուսուցման ողջ համակարգի նպատակը երեխայի ընդհանուր զարգացումն է, որն առաջին հերթին իրականացվում է խոսքի միջոցով և արտահայտվում է խոսքի մեջ: Հենց այդ առումով էլ աշակերտի խոսքի զարգացումը մայրենի լեզվի տարրական դասընթացի կարևորագույն խնդիրներից մեկը պետք է դարձնել»[3]:

Դպրոցում լեզուն մի կողմից՝ ուսուցանվում է որպես հատուկ առարկա՝ նպատակ ունենալով զարգացնել աշակերտների գրավոր ու բանավոր խոսքը, մյուս կողմից՝ նպաստում է այլ առարկաների ուսուցմանը: Գործնական նշանակությունից լեզուն աստիճանաբար անցնում է ավելի բարդ գործառույթի և, առհասարակ, հանդես է գալիս որպես տրամաբանության զարգացման միջոց: «Մայրենի լեզու սովորեցնելը երեք նպատակ է հետապնդում, առաջին՝ զարգացնել երեխաների այն բնածին, հոգեկան ունակությունը, որն անվանում ենք խոսելու ձիրք, երկրորդ՝ երեխաներին հասցնել մայրենի լեզվի գանձերի գիտակցական յուրացմանը և երրորդ՝ երեխաներին յուրացնել տալ այդ լեզվի տրամաբանությունը»[4]:

Բանավոր խոսքի որոշակի պաշարով երեխան մտնում է դպրոց: Բառապաշարը ճշտելու և հոմանիշներով ու հականիշներով հարստացնելու, բառերը նախադասությունների մեջ և

---

[1] Ս. Գյուլբուդաղյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1978, էջ 55:
[2] Ա. Տեր-Գրիգորյան, Խոսքի զարգացման մեթոդիկա. Տարրական դասարաններ, Երևան, 1974, էջ 7:
[3] Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 404:
[4] Կ. Ուշինսկի, Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1950, էջ 742:

նախադասություններն իրար հետ կապակցելու, խոսք կառուցելու վարժությունների ընթացքում երեխայի խոսքն ավելի ու ավելի է մշակվում: Հենց այդ խոսքն էլ հիմք է դառնում գրավոր խոսք սովորեցնելու համար: Գրավոր խոսքի ուսուցումը բանավոր խոսքի մակարդակին հասցնելու նպատակով փորձված ուսուցիչներն աշխատում են հնարավորին չափ սերտորեն կապակցել բանավոր ու գրավոր աշխատանքները: Գտնելով, որ գրավոր խոսքի ուսուցման ժամանակ զարգացման թե՛ հիմքը, թե՛ նյութը բանավոր խոսքն է, ուսուցման սկզբնական շրջանում նրանք գրավորները ծառայեցնում են բանավոր խոսքի զարգացման խնդիրներին: Գրելու փորձ և ուղղագրական անհրաժեշտ հմտություն չունենալու պատճառով գրաճանաչության շրջանում աշակերտները գրում են դանդաղ և շատ սխալներով, այդ պատճառով նրանք աշակերտներին շատ գրել չեն տալիս, իսկ երբեմն էլ գրավորների որոշ տեսակներից ժամանակավորապես հրաժարվում են: Դա, իհարկե, չի նշանակում, որ գրավոր խոսքի ուսուցումը հետին պլան է մղվում. գրավոր խոսքը միշտ էլ մնում է ուշադրության կենտրոնում: Եվ որքան աշակերտները հմտանում են գրագետ գրելու մեջ, այնքան գրավոր խոսքի ուսուցման զարգացման աշխատանքները ծավալվում են, աստիճանաբար հավասարեցվում բանավոր խոսքի զարգացման աշխատանքներին: Նշված հանգամանքների հաշվառումով է ընտրվել ներկա աշխատանքի թեման:

Թեմայի արդիականությունը: Հոմանիշների, հականիշների ուսուցման քննությունը արդիական նշանակություն ունի, քանի որ հնարավորություն է տալիս ժամանակակից մեթոդների դիտարկմամբ ուսումնասիրելու դասագրքերում բառապաշարի համալրման, խոսքի զարգացմանն ուղղված առաջադրանքները, անցկացրած դասընթացների հիման վրա առաջարկելու հոմանիշների, հականիշների ուսուցման արդյունավետ միջոցներ ու եղանակներ: Ուսումնասիրության թեմայի արդիականությունը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցման ժամանակակից մեթոդների դիտարկմամբ փորձ է արվում բացահայտելու հոմանիշների, հականիշների ուսուցման առանձնահատկությունները տարրական դասարաններում:

Ուսումնասիրության նպատակն է քննել հոմանիշների, հականիշների ուսուցման առանձնահատկությունները կրտսեր դպրոցի մայրենի լեզվի ուսուցման գործընթացում:

Ուսումնասիրության խնդիրները: Բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցման առանձնահատկությունները հաշվի առնելով՝ փորձել ենք ուսումնասիրել կրտսեր դպրոցականի բառապաշարի՝ հոմանիշներով, հականիշներով համալրման գործընթացը: Այդ նպատակով մեր աշխատանքում առաջադրել ենք հետևյալ խնդիրները.

ա. ներկայացնել բառերի ձևաիմաստային խմբերը,

բ. ուսումնասիրել և վերլուծել հոմանիշների, հականիշների ուսուցման մեթոդաբանությունը,

գ. ուսումնասիրել և վերլուծել հոմանիշների,, հականիշների ուսուցման գործընթացը՝ որպես կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացման կարևոր պայման,

դ. բացահայտել հոմանիշների ուսուցման առանձնահատկությունները աշակերտի բառապաշարի հարստացման գործում,

ե. ներկայացնել հականիշների ուսուցման առանձնահատկությունները:

Ուսումնասիրության օբյեկտն ու առարկան: Մեր ուսումնասիրության առարկան հոմանիշների ու հականիշների ուսուցման մեթոդաբանությունն է, իսկ օբյեկտը՝ մայրենի լեզվի ուսուցման գործընթացը տարրական դասարաններում:

Հետազոտության նորույթը: Ուսումնասիրության նորույթը ժամանակակից մեթոդների կիրառությամբ հոմանիշների, հականիշների ուսուցման առանձնահատկությունների բացահայտումն է: Հետազոտության շրջանակներում ընդլայնվել են բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցման մեթոդների վերաբերյալ պատկերացումները, առաջարկվել են արդյունավետ միջոցներ ու ձևեր, որոնք կնպաստեն աշակերտի խոսքի զարգացմանը:

Ուսումնասիրության տեսական և գործնական նշանակությունը: Հետազոտության տեսական արժեքը դասագրքերի, մեթոդական ձեռնարկների փաստական նյութի քննության հիման վրա հոմանիշների, հականիշների ուսուցման գործընթացի կարևորումն է: Ուսումնասիրության արդյունքում կատարված մեկնաբանությունները, խոսքի զարգացման առաջարկող մեթոդները գործնական նշանակություն ունեն. կարող են օգտակար լինել մայրենի լեզվի ուսուցման հարցերով զբաղվող մասնագետների, մանկավարժների, ինչպես նաև ուսանողներին նմանօրինակ հետազոտություններ կատարելիս:

Աշխատանքի կառուցվածքը: Հետազոտությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, եզրակացություններից, օգտագործված գրականության ցանկից: Այն կազմում է համակարգչային շարվածքի 42 էջ:

ԳԼՈՒԽ 1. ԲԱՌԵՐԻ ՁԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

1.1 Հոմանիշ և հականիշ բառերի ուսուցումը որպես կապակցված խոսքի ապահովման պայման

Բառերը սերտորեն կապված են իրար հետ: «Բառերն ու նրանց նշանակությունները ապրում են ոչ թե իրարից անջատ կյանքով, այլ անկախ մեր գիտակցությունից միավորվում են տարբեր խմբերի մեջ: Ընդ որում՝ խմբավորման համար հիմք է ծառայում նմանությունը կամ ուղղակի հակադրությունն ըստ իմաստի»[5]: Ըստ այդմ՝ բառերը բաժանվում են խմբերի, որոնք ոչ թե սոսկ ձևով են որոշվում կամ իմաստով, այլ դրանց միասնությամբ: Առանձնացվում են բառերի ձևաիմաստային խմբեր՝ համանուններ, հոմանիշներ, հականիշներ և հարանուններ, որոնք որոշակի ընդհանրություններ ու տարբերություններ են երևան հանում միմյանց նկատմամբ: Այդպես պարզ են դառնում տարբեր բառերի, բառախմբերի միջև դրսևորվող կապերն ու հարաբերությունները:

Ըստ ձևաիմաստային հատկանիշների՝ բառերը բաժանվում են հետևյալ խմբերի՝ **հոմանիշներ, հականիշներ, համանուններ և հարանուններ**: Խոսքում առավել լայն կիրառություն ունեն հոմանիշներն ու հականիշները:

«Հոմանիշները,– ինչպես նշում է Ա. Մարգարյանը,– բնորոշվում են նույն կամ մոտ իմաստներով, որոնք, սակայն, միատեսակ պատկեր չեն ներկայացնում և զանազանվում են իմաստային տարաստիճանավորումներով»[6]: Ուրեմն հոմանիշները միևնույն հասկացություններ արտահայտող այն բառերն են, որոնք ունեն մոտ կամ նույն իմաստները և միաժամանակ կարող են տարբերվել ոճական կիրառությամբ, հուզաարտահայտչական երանգավորմամբ, կիրառության ոլորտով և հաճախականությամբ, ինչպես նաև ուրիշ բառերի հետ կապակցվելու հնարավորություններով:

Հոմանիշները կազմում են շարք, որը բառերի, բառակապակցությունների, դարձվածքների և քերականական այլ ձևերի այնպիսի խումբն է, որի մեջ մտնող բաղադրիչները իրար հետ կապված են հոմանշային կապերով ու հարաբերություններով: Հոմանշային շարքի մեջ մտնող միավորները հիմնականում արտահայտում են միևնույն հասկացությունը, բայց

[5] М. Покровский, Избранные работы языкознанию, Москва, 1959, с. 82.
[6] Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու: Բառագիտություն, Երևան,1993, էջ 80:

իրարից տարբերվում են կա՛մ իմաստային նրբերանգներով, կա՛մ ոճական կիրառությամբ ու հաճախականությամբ:

Հոմանիշների շարքը կազմված է լինում նվազագույնը երկու բաղադրիչներից և լինում է երկանդամ ու բազմանդամ: Հոմանիշների շարքում սովորաբար առանձնանում է բաղադրիչներից մեկը, որը տվյալ դեպքում հասկացությունն արտահայտող հիմնական, ելակետային բառն է, որն ունի ընդհանուր իմաստ և ոճականորեն չեզոք է, գործածությամբ էլ ավելի հաճախված:

Հոմանիշների դասակարգմամբ առաջինը լրջորեն զբաղվել է Մ. Աբեղյանը: «Հոմանիշ» գիտաբառի փոխարեն նա գործածել միայն «նույնանիշ» և «համանիշ» անվանումները՝ նույնանիշի դեպքում նկատի ունենալով ՝նույն նշանակությունը ունեցող՝, իսկ համանիշի դեպքում՝ ՝նշանակությամբ նուրբ կերպով իրարուց տարբերվող բառերը՞[7]: Հետագայում, ինչպես արդեն նշել ենք, գործածվել է ընդհանուր՝ հոմանիշ անվանումը, իսկ համանիշներն ու նույնանիշները դիտվել են որպես հոմանիշության երկու առանձին տեսակներ[8]:

Հոմանիշները դասակարգվում և խմբավորվում են տարբեր մոտեցումներով ու չափանիշներով: Հոմանիշների դասակարգման ժամանակ նախ և առաջ անհրաժեշտ է նկատի ունենալ այն ժամանակահատվածը, լեզվի զարգացման այն փուլը, երբ նրանք գործածվում են: Այս առումով պետք է տարբերակել հոմանիշների երկու խումբ՝ համաժամանակյա, երբ հոմանիշների շարքի մեջ մտնող բաղադրիչները գործածվում են լեզվի զարգացման տվյալ փուլում, և տարժամանակյա, երբ այդ բաղադրիչները գործածվել են լեզվի զարգացման տարբեր փուլերում (գրաբար, միջին հայերեն, աշխարհաբարի տարբեր շրջաններ և այլն):

Հոմանիշների գործառական - ոճական դասակարգման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ոչ միայն հոմանիշների շարքի մեջ մտնող բաղադրիչների գործածությունն ըստ գործառական տարբեր ոճերի, այլև ըստ լեզվի կիրառության ոլորտների: Ըստ այդմ՝ հիմնականում տարբերվում են գործածության երեք ոլորտ՝ գրական, գրքային կամ վերամբարձ, խոսակցական կամ չեզոք և ցածր (բարբառային):

Մեկ այլ մոտեցմամբ **հոմանիշները** դասակարգվում են նաև **լեզվական** և **խոսքային** խմբերի: «Լեզվական խմբի հոմանիշներն արդեն իսկ լեզվի մեջ գոյություն ունեցող բառերն են, որոնք կարող են գործածվել լեզվի տարբեր ոլորտներում կամ գործառական բոլոր ոճերում, իսկ

---

[7] Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, էջ 154, 159:

[8] Վ. Առաքելյան, Ա. Խաչատրյան, Ս. Էլոյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1979, էջ 201, Գ. Ջահուկյան, Էդ. Աղայան և ուրիշներ, Հայոց լեզու, Երևան, 1980, էջ 236:

խոսքային հոմանիշներն ունեն կիրառության սահմանափակ ոլորտ»[9]: Դրանք ունեն հեղինակային բնույթ, հիմնականում գործածվում են գեղարվեստական գրականության մեջ և կոչվում են անհատական կամ հեղինակային հոմանիշներ[10]:

Հականիշներն իրար հակադիր իմաստ արտահայտող բառերն ու արտահայտություններն են, որոնք խոսքի մեջ գործածվում են տարբեր նպատակներով և ոճական տարբեր երանգներով: Լեզվում հականիշները գործածվում են այնպիսի հակադիր առարկաներ, երևույթներ, հատկանիշներ և այլն նշանակելու համար, որոնք իմաստով կարող են հարաբերակցվել: Ըստ Ա. Սուքիասյանի՝ հականշության համար առաջին հերթին հիմք կարող է հանդիսանալ բառի բառային իմաստի մեջ որակական հատկանիշի առկայությունը[11]:

Հականիշներն իրար հակադիր իմաստ արտահայտող բառեր են, որոնք ունեն հակադիր իմաստ և խոսքի մեջ ունեն ոճական որոշակի երանգավորում: Հակա-նիշները լինում են բուն, բացարձակ կամ հակադրական և ժխտական[12]:

Բացարձակ կամ հակադրական հականիշները ցույց են տալիս տրամաբանորեն իրար հակառակ առարկա, հատկանիշ և գործողություն, որոնք միմյանց հակառակ իմաստ են արտահայտում, ինչպես՝ լավ-վատ, գեղեցիկ - տգեղ, երկար-կարճ, մեծ-փոքր, սիրել - ատել, արագ - դանդաղ և այլն:

Ժխտական են այն հականիշները, որոնց շարքերի մեջ մտնող բաղադրիչներից մեկը ժխտում է, բացասում մյուսի ցույց տված հատկանիշի առկայությունը: Ժխտական հականիշները սովորաբար կազմվում են ան, ապ, տ, դժ, չ ժխտական նախածանցներով, ինչպես՝ ազնիվ - անազնիվ, վստահելի - անվստահելի, հավատարիմ - անհավատարիմ, հաճելի - տհաճ, գեղեցիկ - տգեղ, բախտավոր - անբախտ - դժբախտ և այլն: Նշված զույգերի մեջ առաջինները ներկայացնում են առարկայի կամ հատկանիշի դրական, հաստատական բևեռը, նշված հատ-կանիշներով նրանց օժտված լինելը, երկրորդները արտահայտում են հատկանիշների բացակայությունը, չունենալը կամ ժխտումն ընդհանրապես:

Հականիշները կարող են լինել նաև նույնարմատ և տարարմատ: Առաջին դեպ-քում միևնույն արմատին ավելացնելով որևէ ածանց, ստանում ենք նույնարմատ հա-կանիշների շարք: Ինչպես՝ հաճելի - տհաճ, դուրեկան - անդուր, գիտուն - անգետ, գե-ղեցիկ - տգեղ,

---

[9] Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, էջ 70:
[10] Ա.Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1990, էջ 13:
[11] Ա. Սուքիասյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան,1999, էջ 134:
[12] Ռ. Շալունց, Հականիշ բառերը ժամանակակից հայերենում, Երևան, 1979, էջ 45, Ս. Աբրահամյան, Հայոց լեզու: Բառ և խոսք, Երևան, 1978, էջ117:

պայմանով, որ հականիշների շարքի մեջ մտնող բաղադրիչները միևնույն խոսքի մասերի պատկանելությունն ունենան, քանի որ միշտ չէ, որ միևնույն բառով և ժխտական ածանցներով կազմված բառերը հականիշներ են կազմում, ինչ-պես՝ տուն - անտուն, սեր - անսեր, վախ - անվախ, սիրտ - անսիրտ և այլն:

Հականիշներ են առաջանում նաև այն դեպքում, երբ միևնույն արմատով կազմ-վող բաղադրություններում դրական, հաստատական ներկայացնելու փոխարեն դրվում են հականիշ ածանցներ, ինչպես՝ ներգաղթ - արտագաղթ, հոմանիշ - հականիշ, ներլեզ-վական - արտալեզվական և այլն:

Տարարմատ հականիշները բուն տրամաբանական կամ հակադրական հակա-նիշներն են և կազմվում են տարբեր արմատներից, ինչպես՝ մեծ - փոքր, երկար - բա-րակ, հեռու - մոտիկ, ուշ - շուտ, սիրել - ատել, քանդել - շինել և այլն: Լեզվի մեջ սովո-րաբար հականիշներ են կազմում այն բառերը, որոնք իրար հետ կարող են կապվել հակադիր կամ հակադիր հարաբերակցական հասկացություններով և արտահայտում են իրարով պայմանավորված հակադրական իմաստներ:

Հականիշները լինում են նաև **լեզվական և խոսքային**: Լեզվական են այն հականիշները, որոնք անկախ իրենց համատեքստային կիրառությունից, առանց խոսքային իրադրության արտահայտում են հակադիր իմաստներ և զուտ լեզվական իրողություններ են: Խոսքային կամ համատեքստային հականիշներ են կազմում այնպիսի բառեր կամ բառաձևեր, որոնք, առանձին վերցրած, լեզվական մակարդակում իրար հակադիր իմաստներ չունեն, բայց որոշ կիրառություններում այդ բառերը ձեռք են բերում իմաստային բազմապիսի երանգավորումներ, արտահայտում են հակադրական հարաբերություններ և խոսքի մեջ կազմում հականշային զույգեր: Այլ կերպ ասած՝ խոսքային մակարդակում հականշություն են ձեռք բերում ոչ միայն բացարձակ առումով միմյանց հակադիր իմաստ արտահայտող բառեր, այլև երբեմն նույնիսկ իրար նկատմամբ հակադրական հարաբերություններ չունեցող բառեր, բառաձևեր ու կապակցություններ: Ուրեմն, «խոսքային են այն հականիշները, որոնք, առանձին վերցրած, խոսքից դուրս միմյանց ուղղակիորեն հականիշ չեն և հականշություն են ձեռք բերում խոսքի մեջ՝ բառային որոշակի շրջապատում, որոշակի համատեքստերում»[13]:

Բառերի ձևաիմաստային խմբերի ուսուցումը ունի գերազանցապես գործնական նպատակ՝ հարստացնել աշակերտի խոսքը փոխաբերություններով, բազմիմաստ բառերով,

[13] Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան,1989, էջ 157:

համանիշներով, նույնանիշներով, հականիշներով և համանուններով: Դա նշանակում է, որ հիշյալ բառատեսակները անցնելիս մեծ տեղ պիտի հատկացնել բառերի կիրառական զանազան վարժություններին[14]: Ուսուցիչը ինքը պետք է ընտրի աշակերտների ինքնուրույն գործունեության համար առաջադրվող հանձնարարությունները՝ ելնելով աշակերտների անհատական առանձնահատկություններից: Դա նշանակում է, որ սովորողների ինքնուրույ-նությունը միայն աշակերտների անհատական աշխատանքների ընթացքում չի զարգանում: Ինքնուրույն գործունեության բազմաթիվ կարողություններ, հատկապես սեփական ուժերը գնահատելու և սեփական գործի կարևորությունը գիտակցելու կարողությունները, պետք է զարգացնել խմբային աշխատանքների միջոցով: Սովորողների ներուժին համապատասխան ուսուցչի տրված առաջադրանքների կատարման արդյունքում նրանք աստիճանաբար ձեռք են բերում ինքնուրույն ընթերցելու, ընթերցածի շուրջ մտորելու, եզրահանգումներ կատարելու կարողություններ:

Հոմանիշների և հականիշների ուսուցումը կապակցված խոսքի յուրացման կարևոր պայման է: Մեծանուն մանկավարժ Ղ. Աղայանն այն կարծիքին էր, որ ոչ մի բառ երեխայի համար չպետք է մութ մնա. նա պետք է հասնի կարդացածի լրիվ ու ճիշտ յուրացմանը, որը նա կապում էր զննականության, բառի ու բառիմաստի համատեղ ըմբռնման հետ: «Մեզ հարկավոր է, որ աշակերտը ոչ միայն հասկանա բառերը և նոցա մասերը,- ասում էր նա,- այլև իրերը, առարկաները և նոցա մասերը, որպեսզի ոչ միայն կարողանա պատմել յուր լսածն ու կարդացածը, այլև նկարագրել իր տեսածը»[15]: Ըստ Աղայանի՝ աշակերտի բառապաշարը հարստացնելու համար անհրաժեշտ է նրա միտքը հարստացնել դրանց համապատասխան ընկալումներով ու գիտելիքներով:

Մեծ մանկավարժների նշված տեսակետները արդիական են նաև մեր օրերում: Ուսուցիչները մայրենի լեզվի ուսուցման դասերին առանձնահատուկ տեղ են տալիս աշակերտների բառապաշարի հարստացմանը՝ առանձնակի ուշադրություն դարձնելով ընթերցանության բնագրերի ընտրությանը, դասագրքում և ընթերցարաններում գործածված հոմանիշների և հականիշների ուսուցմանը:

Աշակերտների խոսքի զարգացումը մայրենի լեզվի ուսուցման ընթացքում միշտ պետք է ուսուցչի ուշադրության կենտրոնում լինի, որովհետև այն ոչ միայն ուսուցման նպատակն է,

---

[14] Ս. Գյուլբուդաղյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987, էջ 137:
[15] Ղ. Աղայան, Երկեր, հ. 4, Երևան, 1940, էջ 131:

այլև միջոց՝ երեխաների մտածողության, աշխարհաճանաչողության ու գիտելիքների պաշարի զարգացման, բառապաշարի հարստացման համար:

Կապակցված խոսքի ստեղծումը՝ որպես սովորած լեզվական գիտելիքների ու ձեռք բերած բառապաշարի գործնական կիրառության ու երեխայի տրամաբանական մտածողության ու ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց, առաջին դասարանից սկսած՝ թե՛ բանավոր, թե՛ գրավոր աշխատանքներում առանձնահատուկ տեղ և արժեք է ստանում: Խոսքային գործունեությունը բարդ երևույթ է. այն ունի լեզվաբանական, հոգեբանական, ֆիզիոլոգիական, փիլիսոփայական, սոցիոլոգիական և այլ տեսանկյուններ և դիտարկվում է համապատասխան գիտակարգերի կողմից:

Բանավոր խոսքը պատմականորեն նախորդում է գրավորին, ունի խոսակցական-արտասանական իրացում: Այն հիմնականում բարձրաձայն խոսողություն է. կարելի է ձայնագրել ու վերարտադրել, հաղորդել տեխնիկական միջոցներով (հեռախոս, ռադիո): Որոշակի է սրա պայմանավորվածությունը խոսքային իրադրությամբ, մասնավորապես՝ հաղորդակցվողների փոխհարաբերությամբ, հաղորդողի հոգեվիճակով, տրամադրությամբ: Լեզուն դրսևորվում է խոսքի միջոցով, ուստի չափազանց մեծ է լեզվի գործնական նշանակությունը[16]:

Խոսքի միջոցով կրտսեր դպրոցական տարիքի սովորողը զգայական ճանաչողության սահմանափակ հնարավորությունից անցում է կատարում տրամաբանական մտածողությանը: Ուսուցումն սկսելով հնչյուններից ու տառերից՝ երեխաներն աստիճանաբար անցնում են գրավոր խոսքի ու ընթերցանության տեխնիկայի տիրապետմանը: Կրտսեր դպրոցականի խոսքը դեռևս հիմնականում հենվում է առարկայական ըմբռնումների վրա և հանդես է գալիս կոնկրետ իրի և առարկայի մտապատկերի հետ:

Կապակցված խոսքի ձևավորման և զարգացման համար շատ կարևոր են բառապաշարի հարստացման ուղղությամբ տարվող աշխատանքները[17]: Ցանկացած գրական երկ, ուսուցանվող կամ ընթերցվող թեմա բառապաշարի համալրման աղբյուր է:

Տարրական դասարաններում բառապաշարի հարստացման ուղղությամբ հիմնականում աշխատանք է տարվում մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի և նկարազարդումների վերլուծության ժամանակ: Այս աշխատանքն իրականանում է ընդամենը տեքստի մակարդակում: Սակայն կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման

[16] Լ. Բագումյան, Բանավոր խոսքի զարգացումը, «Մանկավարժական միտք», 2015, 4/59/, էջ 254:
[17] Վ. Ավագյան, Բառագիտության ուսուցումը դպրոցում, Երևան, 1989, էջ 3:

մեթոդիկան նախատեսում է նաև հատուկ աշխատանք հոմանիշների և հականիշների ուղղություններով: Բառային աշխատանքի բոլոր ուղղությունները պետք է իրականացնել միայն գործնական ճանապարհով՝ գլխավորապես հենվելով դասագրքերում զետեղված բնագրերի ու նկարների վրա՝ առանք քերականական եզրույթներ հաղորդելու: Օրինակ՝ գոյականի ուսուցման ժամանակ առանձնացված ծաղկանունները տրվում են համապատասխան նկարների միջոցով:

Այսպիսով՝ տարրական դասարանների մայրենիի ծրագրում **հոմանիշների, հականիշների** առանձին ուսումնասիրություն նախատեսված չէ: Սակայն մայրենիի դասագրքերի բնագրերում կիրառված են բազմաթիվ հոմանիշներ, հականիշներ, որոնց իմաստ-ները, գործածության առանձնահատկությունները անպայմանորեն պետք է բացատրվեն աշակերտներին: Դասագրքերում զետեղված գեղարվեստական ստեղծագործությունների, տարբեր բնագրերի ու տեքստերի շուրջ զրույցներ անցկացնելիս անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը բևեռել հոմանիշներով, հականիշներով հարուստ խոսքի արտահայտչականության վրա՝ խրախուսելով դրանց կիրառումը կրտսեր դպրոցականների խոսքում:

Տարրական դասարաններում հոմանիշների մասին տեսական գիտելիքներ չեն տրվում, սակայն գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման համատեքստում հնարավոր է լինում ընթերցվող բնագրում հոմանիշների, հականիշների առանձնացումով նպաստել աշակերտների բառապաշարի հարստացմանը:

Կրտսեր դպրոցականի բառապաշարի համալրմանն առնչվող խնդիրներն ու նպատակները տարրական դասարաններում հետևյալներն են.

- հարստացնել աշակերտի բառապաշարը,
- ձևավորել և դասարանից դասարան զարգացնել երեխաների կարդալու կարողությունները,
- մաքրել, հղկել երեխաների՝ նախադպրոցական տարիքում ձեռք բերած բառապաշարը,
- ձևավորել փոքրածավալ տարաբնույթ ստեղծագործություններ ընթերցելու, դրանց հիմնական գաղափարը ընկալելու, հերոսների գործողությունների տրամաբանականությունն ընկալելու, պարզ դատողություններ անելու կարողություններ,
- ձևավորել հաղորդակցական կարողություններ, բարեկիրթ խոսքի մշակույթ,
- գեղարվեստական նյութերի ընթերցման, լեզվական տարրական գիտելիքների ու կարողությունների ձեռքբերման ճանապարհով ձևավորել հայեցի մտածողություն, ազգային

հոգեկերտվածք, զարգացնել լեզվամտածողությունը, վերլուծական և քննադատական մտածողությունը:

Սկսած առաջին դասարանից՝ ուսուցիչը աշակերտների ունեցած բառի՝ իմաստային կողմի ընկալման ունակությունը զարգացնելու նպատակով բազմաբնույթ վարժություններ է կատարում ծանոթ բառերին իմաստով մոտ և հակառակ իմաստ արտահայտող բառեր գտնելու ուղղությամբ, և այդ բնական է, որովհետև բառային աշխատանք կատարելիս աշակերտները ոչ միայն հասկանում ու բացատրում են ընթերցած նյութի՝ իրենց համար անծանոթ բառերը, այլև սովորում են դրանք օգտագործել խոսքում կամ դրանցով նախադասություններ կազմել, գտնում' այդ բառերին իմաստով մոտ և հակառակ իմաստ արտահայտող բառերը: Երեխաները մեծ հաճույքով լծվում են այդ աշխատանքին, այստեղ է, որ ուսուցիչը իր մանկավարժական վարպետությամբ պետք է ցույց տա հոմանիշ բառերի արտահայտչական ուժը:

Նախ աշակերտներն ուսուցչի օգնությամբ ընթերցվող բնագրում հայտնաբերում են հոմանիշները, ուսուցիչը պարզաբանում է դրանց նրբերանգները, բացատրում տվյալ բնագրում ունեցած նշանակությունը, կատարվում է տվյալ բառի հոմանիշների ընտրություն և նրբերանգների բացատրություն, աշակերտները կատարում են վարժությունների հոմանիշների շուրջ, կազմում են նախադասություններ՝ բառերի հոմանիշները կիրառելով:

Ուսուցիչը աշակերտներին պետք է բացատրի, որ հոմանիշները միմյանց նկատմամբ դրսևորում են տարբեր՝ իմաստային, գործառական, ոճական-արտահայտչական, կապակցական և այլ տարբերություններ: Ընդ որում՝ հոմանիշների մի մասի ոճական կիրառությունների դեպքում ընկած է իմաստային, մյուս դեպքում՝ ոճական, այլ դեպքում՝ և՛ ոճական, և՛ իմաստային տարբերություններ, օրինակ՝ **սիրուն-գեղեցիկ, ուտել-խժռել** և այլն:


2 Խմբավորի՛ր իմաստով մոտ բառերը և գրի՛ր.
ահռելի, բարեկամ, մաքուր, մեծ, ազգական, հստակ, խոշոր, մերձավոր, ջինջ, վիթխարի, ազգակից, վճիտ:
Քո կազմած յուրաքանչյուր խմբի բառերը հոմանիշներ են:

Մայրենիի դասագրքից այս առաջադրանքը կատարելիս, երբ խմբավորում ենք բառերը, անպայման երեխաների ուշադրությունն եմ հրավիրում այն հանգամանքի վրա, որ մոտ իմաստ պարունակող բառերն արտահայտում են երևույթի կամ հատկության դրսևորման տարբեր չափեր: Օրինակ՝մեծ-խոշոր-ահռելի-վիթխարի:

Հոմանիշների և հականիշների ուսուցումը նպաստում է աշակերտի բառապաշարի համալրմանը: Բառապաշարը երեխայի խոսքի, մտածողության ու աշխարհաճանաչողության զարգացման հիմքն է. ամեն ինչ մարդ ընկալում է բառերի մեջ կամ բառերի միջոցով, նույնիսկ շրջապատից ստացած անմիջական տպավորությունները, հույզերն ու ապրումները վերջին հաշվով կայունանում ու մտապահվում են բառային հիմքով: Այս առումով բառային աշխատանքը կամ բառապաշարի հարստացումը ոչ միայն խոսքի, այլև ընդհանուր զարգացման համար հսկայական ու անփոխարինելի նշանակություն ունի: «Մայրենի լեզվի» դասագրքի յուրաքանչյուր էջ ուսուցիչը պետք է օգտագործի կրտսեր դպրոցականի բառապաշարը նոր բառերով հարստացնելու համար, իսկ էջերի նկարները, բառաշարքերն ու փոքրիկ բնագրերը նյութ պետք է տան բառային աշխատանքի համար: Այսպիսով՝ տարրական դասարաններում բառապաշարի հարստացման ուղղությամբ հիմնականում աշխատանք է տարվում դասագրքերում զետեղված բնագրերի վերլուծության ժամանակ: Այս աշխատանքն իրականանում է ընդամենը տեքստի մակարդակում: Սակայն կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման մեթոդիկան նախատեսում է նաև հատուկ աշխատանք մի շարք ուղղություններով: Մայրենի լեզվի դպրոցական դասընթացի խնդիրը ոչ միայն սովորողներին լեզվի քերականական կառուցվածքի, նրա համակարգի մասին օրինաչափությունների մասին գիտելիք հաղորդելն է, այլև այն կոչված է նպաստելու աշակերտների խոսքի զարգացմանը, գործնական հմտությունների ձևավորմանն ու դրանց աստիճանական խորացմանը[18]:

Այսպիսով՝ աշակերտի խոսքի ձևավորումը՝ որպես սովորած լեզվական գիտելիքների ու ձեռք բերած բառապաշարի գործնական կիրառության ու երեխայի տրամաբանական մտածողության ու ստեղծագործական կարողությունների զարգացման միջոց, դեռևս գրաճանաչության շրջանից սկսած, թե՛ բանավոր, թե՛ գրավոր աշխատանքներում առանձնահատում տեղ և արժեք է ստանում: Հարկ է նկատել, որ մանկավարժներից շատերը, գրավոր և բանավոր խոսքի առանձնահատկությունները կարևորելով, շեշտը դնում են ուսուցչի աշխատանքի, նրա կիրառած սկզբունքների և դասի կազմակերպման ձևերի վրա: Այս դեպքում որոշ չափով անտեսվում են աշակերտների անհատական ու խմբային գործունեությունը, դասարանային և արտադասարանային աշխատանքները, որոնք ևս կարող են նպաստել

[18] Մ. Միրումյան, Համանունների բառակազմական դերի ուսուցումը որպես խոսքի զարգացման դպրոց, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 2001, 5-6, էջ 66:

աշակերտների հաղորդակցական, համագործակցային կարողությունների, մասնավորապես՝ կապակցված խոսքի զարգացմանը:

1.2 Հոմանիշ և հականիշ բառերի ուսուցման մեթոդաբանությունը

Սովորողների խոսքի զարգացումը դպրոցական դասընթացի հիմնահարցերից մեկն է: Հարուստ բառապաշարն աշակերտներին հնարավորություն է տալիս շարադրելու մտքերը: Բառային աշխատանքի բոլոր ուղղությունները տարրական դասարաններում պետք է իրականացնել գործնական ճանապարհով՝ գլխավորապես հենվելով մայրենիի դասագրքերում զետեղված գեղարվեստական բնագրերի վրա՝ առանց տեսական տեղեկություններ, սահմանումներ, քերականական եզրույթներ հաղորդելու: Ըստ Ջ. Գյուլամիրյանի՝ կրտսեր դպրոցականի խոսքի զարգացմանը ներկայացվող պահանջներն են.

ա. խոսելիքի մասին գիտելիքներ,

բ. կառուցվածքին՝ հետևողականութ;յուն, հստակություն, թեմայի մեկնաբանման տրամաբանություն,

գ. խոսքի ձևավորման՝ բառերի ընտրություն և նախադասությունների կառուցման ճշտություն,

դ. արտահայտչական միջոցների ճիշտ ընտրություն,

ե. ընթերցողի անձի հաշվառում,

զ. համապատասխանություն գրական նորմերին[19]:

Հոմանիշների, հականիշների և բառային այլ աշխատանքների ժամանակ լուծվում են հետևյալ խնդիրները.

1. բառիմաստի բացատրում, որի նպատակն անծանոթ բառի իմաստային մատչելի բացատրությունն է,
2. տեքստում եղած բառերի ձևաիմաստային դասակարգում, հոմանիշների, հականիշների, համանունների հայտնաբերում և դասակարգում, որի նպատակը բառիմաստի ըմբռնման խորացումն է,
3. սովորած բառերի կիրառում խոսքի մեջ[20]:

---

[19] Ջ. Գյուլամիրյան, Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998, էջ 68:

[20] Ա. Տեր-Գրիգորյան, Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, էջ 417:

Նոր կամ անծանոթ բառերի, հոմանիշների, հականիշների մեծ մասը դասագրքի էջում սովորաբար տրված է լինում երկու անգամ՝ բառաշարքերում կամ **նկարներով և կապակցված նյութի մեջ**: Առաջին դեպքում ուսուցիչը բացատրում ու պարզաբանում է բառիմաստը, երկրորդ դեպքում՝ ստուգում իմաստի ըմբռնումը, իսկ եթե հոմանիշը միայն բառաշարքում է տրված, այն կարելի է շարժական տառերով կազմել ու կարդալ տալ, գործածել նախադասությունների մեջ և այլն: Այսպիսով՝ հոմանիշների ուսուցումը տարրական դասարաններում իրականացվում է գործնական ճանապարհով՝ գլխավորապես հենվելով դասագրքում զետեղված գեղարվեստական բնագրերի վրա՝ առանց տեսական տեղեկությունների, սահմանումների, քերականական եզրույթների հաղորդման: Օրինակների միջոցով ներկայացվում են հոմանիշների գործածության առանձնահատկությունները, ոճական տարբերությունները:

Հոմանիշի, հականիշի ուսուցումը տարրական դասարաններում պետք է կազմակերպել մեթոդական հետևյալ շղթայով:

1. Հոմանիշի, հականիշի առանձնացում, իմաստի բացատրում:
2. Հոմանիշի, հականիշի բառակազմական վերլուծություն:
3. Հոմանիշի, հականիշի գործածություն նախադասության մեջ:

Հոմանիշների և հականիշների ուսուցումը կատարվում է 3 փուլով: Նախ առանց ուսուցիչը աշակերտներին տեսական գիտելիքների ծանոթացնում է հոմանիշների, հականիշների օրինակների հետ: Ուսուցման հաջորդ փուլում տեսական որոշակի գիտելիքներ է կատարում: Երրորդ փուլում անդրադարձ է կատարվում նաև հոմանիշների և հականիշների բառակազմական առանձնահատկություններին:

Հոմանիշների, հականիշների ուսուցման ընթացքում իրականացվում է բառային աշխատանք՝ մի քանի քայլերով:

1. Անծանոթ բառի առանձնացում, իմաստի բացատրում, իմաստավորում:

Այս խնդիրներն իրականացվում են ինչպես դասագրքի համապատասխան էջի տողատակում անծանոթ բառի բացատրությունը տալով, այնպես էլ դասանյութի մեթոդական կառույցում դրանց շուրջ տարվող բառակազմական, բառաբարդման, վերլուծական, համադրական աշխատանքներով (օր. Գտի՛ր և կարդա՛ այն բառերը, որոնք օգնեցին քեզ պատկերացնել աշնան գույները: Ասա՛ այն բառերը, որոնցով հեղինակը բնութագրել է հերոսին: Ո՞ր բառերն են քեզ հուշում, որ գարունը գալիս է: Ընտրի՛ր և գրի՛ր այն բառերը, որոնք հաճելի

են՝: Ավելացրո՛ւ դրանց շարքը: Ուրիշ ի՞նչ բառեր կարող էր օգտագործել տատիկը թոռնիկի խնդրանքը մերժելիս և այլն)[21]:

Եթե համակարգված ներկայացնենք, ապա կարելի է շարադրել պրակտիկայում կիրառելի՝ բառիմաստի բացատրության հետևյալ հնարները.

ա) բառի բացատրություն՝ առարկան, առարկայի կամ երևույթի նկարը ցույց տալու ճանապարհով, օրինակ՝ ուշ աշուն բառակապակցությունը բացատրվում է՝ ուշ աշնանային բնությունը պատկերող նկար ցույց տալով,

բ) բառի ստուգաբանում, որի ժամանակ բառիմաստը բացատրվում է բառակազմական վերլուծության ճանապարհով,

գ) բառի բացատրություն այլ՝ իմաստով մոտ բառերի օգնությամբ,

դ) բառի բացատրություն իմաստային՝ մեկնաբանությունների միջոցով. օրինակ՝

հերոս+մարդ - մարդ, որը բոլորից տարբերվում է իր քաջ, անվախ արարքներով,

ե) բառի բացատրություն հականիշների և հոմանիշների միջոցով,

զ) բառի բացատրություն նկարելով:

1. Բառակազմական վերլուծություն, որի հիման վրա բացահայտվում է անծանոթ բառի նշանակությունը, օրինակ՝անվախ-ան(ածանց) և վախ (արմատ), որ նշանակում է վախ չունեցող, տգեղ- տ(ածանց) և գեղ (արմատ), որ նշանակում է ոչ գեղեցիկ:

Տարրական դասարաններում սովորաբար տրվում է այսպիսի հարց. «**Ո՞ր բառերից է կազմվել այս բառը**» կամ «**Ինչո՞ւ են այսպես անվանել՝** ձնծաղիկ, համագյուղացի, լուսաբաց, արևածագ»: Բառերի բացատրության այս եղանակը բառային աշխատանքի և ուղղագրության հետ կապեր ստեղծելու հնարավորություն է տալիս, քանի որ այդ դեպքում բացահայտվում են բառերի արմատները՝ նպաստելով դրանց ուղղագրության յուրացմանը, օրինակ՝ձնծաղիկ- ձն(արմատ) և ծաղիկ (արմատ), համագյուղացի-համա(ածանց) + գյուղ(արմատ)+ացի(ածանց), լուսաբաց-լուս(արմատ)+ա+բաց (արմատ), արևածագ- արև(արմատ)+ա+ծագ(արմատ):

3. Բառերի համեմատում՝ բառակազմական տարբերությունների բացահայտման նպատակով, որն ստեղծում է նույնարմատ բառերի իմաստների սահմանազատման հնարավորություն (օր. արծաթյա և արծաթափայլ, անտառ և անտառապահ, ծաղիկ և ծաղկավոր և այլն):

4. Բացատրություն կռահման ճանապարհով:

[21] Ջ. Գյուլամիրյան, Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, էջ 283-284:

Ուսուցիչը կարդում է անծանոթ բառ պարունակող նախադասությունը և հարցնում է աշակերտներին. «**Ի՞նչ եք կարծում, ի՞նչ կարող է նշանակել այս բառը:** Կռահեք բառի իմաստը՝ մեկ անգամ ևս կարդալով նախադասությունը»:

Դասարանում միշտ էլ կարող են լինել աշակերտներ, որոնք հասկանում են ընթերցած տեքստի բոլոր բառերը և դարձվածքները: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է ձգտել, որ աշակերտներն իրենք բացատրեն բառերի նշանակությունը: Եթե նրանք դժվարանան, կարելի է տալ օգնող հարցեր:

5. Նորածանոթ բառերի բացատրություն տեղեկատվական նյութերի միջոցով, այսինքն՝ բառարաններով, դասագրքի տողատակում կամ հավելվածում տված բացատրություններով, մանկական հանրագիտարանների հոդվածներով և այլն:

6. Առարկայի, նկարի, մակետի, խրտվիլակի կամ գործողության ցուցադրումը կնպաստի սովորողների ճանաչողական ակտիվության զարգացմանը, եթե այդ գործընթացին նրանք մասնակցում են ինքնուրույնաբար և ստեղծագործաբար, իմաստը բացատրող բառերն ընտրել են իրենք, նկարել են ինքնուրույն՝ առանց ուսուցչի կամ ծնողի մասնակցության, պատմում են, թե ինչ պետք է նկարեն, ինչ գույներ պետք է օգտագործեն (և ինչու) և այլն:

7. Հականիշ զույգերի ընտրություն, **լավ-վատ, գեղեցիկ-տգեղ, լույս-խավար** և

այլն:

8. Մեկնաբանող նկարագրություն. այս հնարն արժեքավոր է նրանով, որ ստեղծում է անկաշկանդ զրույցի հնարավորություն, երեխաները փորձում են ինքնուրույն խոսք կառուցել, բացատրել այս կամ այն բառի իմաստը:

Բառային աշխատանքի խնդիրն է ստուգել՝ արդյոք երեխաները ընկալել են հոմանիշների, հականիշների իմաստը և կարող են դրանք կիրառել խոսքում: Այդ նպատակով պիտի առաջարկել բառերը գործածել բառակապակցությունների, նախադասությունների, կապակցված խոսքում: Այս մեթոդական հնարը նպաստում է նորածանոթ բառերը խոսքում ըստ իմաստի ճիշտ կիրառելու, այլ բառերի հետ կապակցություններ ստեղծելու կարողությունների ձևավորմանը: Այս նպատակով տրվող առաջադրանքները պետք է ձևակերպել այնպես, որ աշակերտները բառերը ոչ թե պարզապես գործածեն խոսքում, այլ իրականացնեն մտավոր որոշ գործողություններ:

Կրտսեր դպրոցականների բառապաշարի համալրմանը առաջին հերթին նպաստում է հոմանիշների և հականիշների ուսուցումը: Հայտնի է, որ հոմանիշներն իրականության միևնույն երևույթները տարբեր կերպ բնութագրող բառերն են (կա՛մ առանձնացնելով և

անվանելով առարկայի տարբեր կողմերը, կա՛մ բնութագրելով այդ առարկան տարբեր տեսանկյունից)։ Այսպես, շողոքորթ բառի հոմանիշները (*քաղցրախոս, կեղծավոր, հաճոյասեր, ծառայամիտ, ստորաքարշ* և այլն) արտահայտում են այդ հատկանիշի տարբեր երանգները, տարբեր աստիճանները, ընդ որում՝ հաճախ իրարից բավական հեռու իմաստներ, *քաղցրախոս - ստորաքարշ։*

Հականիշները հակառակ իմաստ արտահայտող բառերն են և խոսքում օգտագործվում են հակադրություն ստեղծելու համար։ Այդ հակադրություններն ակնառու դարձնելու համար իրար կողքի ցուցադրվում են, օրինակ՝ արևոտ և ամպամած օրերը ներկայացնող նկարներ, և առաջարկվում է երեխաներին մեկական բառով նկարագրել նկարներում պատկերված կեսօրը։ Իրար կողքի ցուցադրված հակադիր բովանդակությամբ նկարները, երևույթները, զգացմունքները և այլն ընկալ-վում են ավելի հստակ, ընդգծված։

Հոմանիշների, հականիշների շուրջ պարբերաբար կատարվող տարբեր վարժությունները կզարգացնեն երեխաների տրամաբանական մտածողությունը, կհարստացնի նրանց ակտիվ բառապաշարը, կսովորեցնի կառուցել կապակցված խոսք։

Հականիշները արտահայտչական բազմազան դրսևորումներ ունեն։ Նրանք գալիս են դարերի խորքից, ժողովրդական լեզվամտածողության լավագույն արտահայտություններ են։ Եվ բնավ պատահական չէ, որ նրանք ավելի շատ ու լայնորեն են գործածվում առածներում, ասացվածքներում, հանելուկներում։ Դրանք օգտագործված են մայրենիի գործող դասագրքերում, և դասագործընթացում ուսուցիչները լուրջ աշխատանք են տանում դրանցում հականիշների գործածության առանձնահատկությունների բացահայտման ուղղությամբ։

Երեխաներն իրենց խոսքում հականիշներ օգտագործում են դեռևս նախադպրոցական տարիքից։ Դպրոց հաճախելու առաջին իսկ օրվանից մայրենի լեզվի դասերին այս կարողությունն աստիճանաբար զարգանում է։ Թեև աշակերտները հականիշների հանդիպում են դեռևս գրաճանաչության շրջանում՝ այբբենարանի նյութերն ընթերցելիս, սակայն հականիշների շուրջ տարվող համակարգված աշխատանքն սկսվում է մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի, այդ թվում՝ հեքիաթների վերլուծությունից, որից հետո կատարվում են նաև հատուկ վարժություններ.

• բնագրում հանդիպած հականիշների ընտրություն.

• հականիշների, ավելի ճշգրիտ՝ հականիշ-զույգերի՝ նախադասության մեջ օգտագործում.

• նախադասության ամբողջացում հականիշներով (օր. Դաշտում ցուրտ է, իսկ

սկյուռիկի տնակում...).

• բազիմաստ բառին համապատասխան հականիշի ընտրություն օր. թարմ հաց, ... հաց, թարմ օդ, ...օդ).

• հականիշի և հոմանիշների զույգերի կազմում (օր. հին, մաշված-նոր)։ Դարձվածքները, որպես կանոն, փոխաբերությունների բնույթ են կրում, այսինքն՝ հենվում են բառի բազմիմաստության, այլաբանության, նրա լրացուցիչ նշանակության վրա։ Այդ իսկ պատճառով **դարձվածքների բացատրությունը** պետք է անցկացնել ոչ միայն համապատասխան հոմանիշների օգնությամբ, այլև դարձվածքի շուրջ տարվող աշխատանքն ավարտել՝ դրանք օգտագործելով նախադասությունների և կապակցված խոսքի մեջ։

Դասագրքերում զետեղված գեղարվեստական ստեղծագործությունների, ժողովրդական բանահյուսության շուրջ զրույցներ անցկացնելիս անհրաժեշտ է աշակերտների ուշադրությունը հրավիրել հոմանիշներով, հականիշներով հարուստ խոսքի արտահայտչականության վրա և խրախուսել նրանց կողմից հոմանիշների ու հականիշների կիրառումը։ Չնայած այն բանին, որ տարրական դասարանների մայրենիի դասագրքերում օգտագործվում են բազմաթիվ հոմանիշներ (առակներում, առածներում, բանաստեղծություններում, պատմվածքներում, հեքիաթներում) կրտսեր դպրոցականներն իրենց խոսքում դրանք համեմատաբար քիչ են գործածում։ Աշակերտի բանավոր խոսքի հարստացման օրինակ է երրորդ դասարանի մայրենիի դասագրքում զետեղված Աթաբեկ Խնկոյանի <<Ճանճը>> առակի մեջ եզան և ճանճի բնութագրումը։ Եզանն ու ճանճին բնութագրելու ժամանակ աշակերտը պետք է կարողանա հակադրել եզան ուժեղությունն ու ճանճի թուլությունը, աշխատասիրությունն ու ծուլությունը, համեստությունն ու պարծենկոտությունը, խորամանկությունն ու միամտությունը։

Հայտնի է, որ դարձվածքները հարստացնում են խոսքը, ուժեղացնում են նրա տպավորությունը, մտքի արտահայտչականությունն ու սրությունը։ Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է հետևողական աշխատանք տանել, որ երեխաները դարձվածքները օգտագործեն ոչ միայն կարդացած բնագրերը վերարտադրելիս, այլև ինքնուրույն կառուցած խոսքում։

Դպրոցականները պետք է ոչ միայն հիշեն դասագրքերում զետեղված դարձվածքները, այլև կարողանան դրանք կապել իրենց կարդացած այլ ստեղծագործություններում արծարծվող բարոյական հիմնահարցերի, իրենց կյանքում տեղի ունեցող իրադարձությունների հետ, բացատրել դրանց այլաբանական իմաստը։

Հոմանիշների և հականիշների ուսուցումը կրտսեր դպրոցում ունի գործնական ու ճանաչողական արժեք և գործուն բառապաշարի հարստացման հիմնական աղբյուրներից մեկն

է: Աշակերտները պետք է իմանան, օրինակ՝ *անխիղճ-անգութ-դաժան-անողոք- բիրտ-վայրագ* կամ *լավ –վատ, բարի –չար* և այլ բառերի միջև եղած իմաստային ոչ միայն ընդհանրությունը, տարբերությունը, հակադիր իմաստները, այլև կարողանան դրանք գործածել տեղին՝ իմաստային նրբերանգների հաշվառումով: Մի հետաքրքիր առաջադրանք կա դասագրքում(Մայրենի 3, էջ 45), որը կատարելիս երեխաները շատ լավ զգում են բառերի հակադիր իմաստները և կիրառում են խոսքում.


2

Վանդակների փոխարեն տեղադրի՛ր ընդգծված բառերի հականիշները և ամբողջացրո՛ւ առածները:

Քիչ խոսի՛ր, ☐ լսի՛ր:

Փոքրից սկսի՛ր, որ հասնես ☐:

Խելոքին մեկ ասա, ☐՝ հազար ու մեկ:

Լավ է գիտունին գերի լինել, քան ☐՝ սիրելի:

Անհրաժեշտ է նկատի ունենալ հոմանիշների գործածության մի այլ կողմ ևս. խոսքը վերաբերում է այն իրողությանը, որ իմաստային միևնույն շարքի հոմանիշները կարող են գործածվել միայն տարբեր բառական միջավայրում, կապակցվել տարբեր բառերի հետ: Օրինակ՝ *հանդարտ, կամաց, մեղմ* հոմանիշներից յուրաքանչյուրը, մյուսների հետ իմաստային ընդհանրությամբ հանդերձ, ունի նաև կիրառական որոշակի տարբերություն, որը և պետք է բացատրել աշակերտներին, ինչպես՝ *մեղմ բնավորություն, հանդարտ ընթացք, կամաց խոսել*, բայց ոչ երբեք՝ *կամաց բնավորություն* և այլն:

Տարաբնույթ առաջադրանքների կատարման ճանապարհով աշակերտները համոզվում են, որ չափածո ստեղծագործությունների մեջ փոխադարձ փոխարինելիությունը ոչ միայն անհարմար է ոճական կիրառության տեսակետից, այլև խախտում է բանաստեղծության չափն ու հանգը, խարխլում հեղինակի ոճը: Շահեկան է, որ աշակերտներն ունենան հոմանիշ բառերի տետր՝ իրենց սովորած, դասագրքերի մեջ հանդիպող հոմանիշները գրելու համար:

Հոմանիշների ամեն մի շարքի կամ խմբի մեջ մտնող բառերը նպատակա հարմար է գրել ոչ թե այբբենական կարգով, այլ իմաստային, կիրառական յուրահատկության հաշվառման սկզբունքով (հոմանշային շարքով), օրինակ՝ *խնդրել-պաղատել-հայցել-աղերսել-թախանձել*: Ճիշտ է, հոմանիշներն ըստ իմաստի ընդգծվածության աստիճանական մեծացման դասավորելը դժվար աշխատանք է, բայց այդ աշխատանքը կարելի է կատարել 3-4-րդ դասարաններում: Դիտարկենք մեկ օրինակ մայրենիի դասագրքից.


2 Խմբավորի՛ր իմաստով մոտ բառերը և գրի՛ր.
ահռելի, բարեկամ, մաքուր, մեծ, ազգական, հստակ, խոշոր, մերձավոր, ջինջ, վիթխարի, ազգակից, վճիտ:
Քո կազմած յուրաքանչյուր խմբի բառերը հոմանիշներ են:

Այս առաջադրանքը պահանջում է խմբավորել իմաստով մոտ բառերը: Իմ պրակտիկայի ընթացքում ես աշակերտներին առաջարկեցի գրել հոմանշային շարքով: Իմ օգնությամբ առաջադրանքը հաղթահարեցին և գրեցին այսպես՝ *մեծ-խոշոր-ահռելի-վիթխարի, մաքուր-ջինջ-վճիտ, բարեկամ-ազգակից-ազգական մերձավոր:*

Հոմանիշների ուսուցմանը անհրաժեշտ է ուշադրություն դարձնել բոլոր առիթներով՝ թե՛ դասագրքային նյութերի օգտագործման, թե՛ արտադասարանական ընթերցանության, թե՛ աշակերտների գրավոր ու բանավոր խոսքի զարգացման ուղղությամբ աշխատանքներ տանելիս: Ուսուցիչը աշակերտներին պետք է բացատրի, որ հոմանիշները միմյանց նկատմամբ դրսևորում են տարբեր՝ իմաստային, գործառական, ոճական-արտահայտչական, կապակցական և այլ տարբերություններ: Ընդ որում՝ համանիշների մի մասի ոճական կիրառությունների հիմքում ընկած են նրբերանգաիմաստային, մի մասի հիմքում՝ ոճական (ոճական–գործառական, ոճական – հուզաարտահայտչական), իսկ մյուս մասի հիմքում՝ միաժամանակ և՛ ոճական, և՛ իմաստային տարբերություններ:

Հոմանիշների և առհասարակ բառերի նպատակային գործածության վերաբերյալ կարելի է աշակերտներին, տալ տարբեր բնույթի հանձնարարություններ: Օրինակ՝ կարելի է տալ բառերի, այդ թվում՝ հոմանիշների շարք ու հանձնարարել գրել շարադրություն՝ դրանց օգտագործմամբ: Իմ պրակտիկայի ընթացքում երեխաներին առաջարկեցի գրել շարադրություն <<Սասունցի Դավիթ>> վերնագրով՝գործածելով իմ տված հոմանիշների շարքը՝ուժեղ-քաջ-խիզախ համարձակ: Կարելի է առաջադրել նախադասություններ՝ որոշ բառերի բացթողումով և

հանձնարարել՝ տրված հոմանիշներից առավել դիպուկներով լրացնել բացթողումները: Կամ՝ տալ տարբեր իմաստ ունեցող բառերի ցանկ և հանձնարարել՝ գտնել դրանց հոմանիշներն ու վերջիններս օգտագործել նախադասություններում:

Երեխաների տրամաբանական մտածողությանը, վերլուծական-համադրական կարողությունների զարգացմանը մեծապես նպաստում են նաև հոմանշային շարքերի ուսուցումը: Այս շարքերի ուսուցումից հետո միայն հնարավոր կլինի հոմանիշների իմաստային նրբերանգները ըմբռնել տալ կրտսեր դպրոցում: Հայտնի է, որ հոմանիշները լեզվում հանդես են գալիս իմաստային շարքերով՝ երկանդամից մինչև բազմանդամ կառուցվածքով: Հոմանշային շարքերի էությունը ըմբռնելու համար պետք է աշակերտների մեջ զարգացնել դրանց տարբերակման կարողություններ, շահեկան է իրականացնել բառիմաստների հակադրության սկզբունքը: Ուսուցիչը պիտք է իմանա, որ հոմանշային շարքի առաջին բառը կոչվում է հիմնաբառ, իսկ շարքի մյուս բառերի իմաստն աստիճանաբար ձեռք է բերում սաստկական նշանակություն՝ արտահայտելով կա՛մ դրական, կա՛մ բացասական գնահատություն:

Բնագրի շուրջ տարվող աշխատանքի ժամանակ գրեթե բոլոր ուսուցիչներն ուշադրություն են դարձնում ոչ միայն հոմանիշ, այլև հականիշ բառերին: Հականիշ բառերն իրենց վառ արտահայտչականությամբ, ասելիքի շեշտակիությամբ ու դիպուկությամբ միշտ էլ կենսունակ ոճական միջոց են եղել թե՛ հին, թե՛ միջին և թե՛ նոր դարերի պոեզիայում ու արձակում: Այստեղ, բացի արտահայտչականության ու դիպուկության գործոնից, թերևս դեր ունի նաև սեղմության, համառոտության գործոնը, որը, բնականաբար, նվազ էական հանգամանք չէ:

Բառակազմություն թեման անցնելիս երկրորդ դասարանցիները ծանոթանում են պարզ, բարդ, ածանցավոր և բարդածանցավոր բառերին: Չի խանգարում երեխաներին բացատրել նաև, որ հականիշներ կազմվում են բառերի այդ տեսակներին ածանցներ ավելացնելով, ինչպես՝ չար-անչար, մաքուր –անմաքուր և այլն:

Կրտսեր դպրոցականները խոսքում ավելի շատ օգտագործում են տարարմատ հականիշները, որովհետև հականշային այդ զույգերը կազմելիս առավելագույնս նրանք օգտագործում են իրենց կոնկրետ մտածողությամբ պայմանավորված բառապաշարի առավել ակտիվ բառերը: Սակայն, երբ երկրորդ դասարանում յուրացնում են ժխտական նախածանցներով նոր բառեր կազմելու ձևերը, սկսում են առավելությունը տալ այդ ածանցներն ունեցող բառերով կազմված հականշային զույգերին, օրինակ՝գեղեցիկ-տգեղ, ազատ-անազատ, արի-անարի, կիրթ-անկիրթ: Հականշային զույգերի կազմման այդ եղանակը հետագայում

այնքան է մատչելի դառնում աշակերտներին, որ հաճախ ուսուցիչները ստիպված են լինում խնդրել, որ աշակերտները կազմեն տարարմատ հականշային զույգեր:

Հականիշները ոճական, արտահայտչական բավական մեծ դեր են կատարում լեզվում: Արտացոլելով արտաքին աշխարհի երևույթների, իրողությունների միջև դրսևորվող կապերն ու հարաբերությունները՝ նրանք լեզվի արտահայտչական կարևորագույն միջոց են և ամենալայն հնարավորություններ են ընձեռում՝ ամենաբազմազան համեմատություններ անելու, տարաբնույթ հակադրություններ ու հակասություններ արտահայտելու, ինչպես նաև խոսքը պատկերավոր, հմայիչ ու ազդեցիկ դարձնելու համար: Հականիշ բառերի հիմնական գործառույթը հակադրությունների համար իբրև լեզվական միջոց ծառայելն է:

Հոմանիշի, հականիշի ուսուցումը ընթերցանության կարևոր բաղադրիչ է: Տարրական դասարանների աշակերտների խոսքի զարգացման համար անհրաժեշտ երեք բաղադրիչների՝ **բառապաշարի հարստացման ու կատարելագործման**, խոսքի **արտահայտչականության՝ առոգանության** և **տրոհության** պահպանման և **լավ պատմելու կարողության** մշակման աշխատանքները պետք է իրականացնել միաժամանակ, միմյանց հետ սերտորեն կապված[22]:

Հականիշ բառերի ուսուցումը մի առանձին դժվարություն չի ներկայացնում: Դրանք համեմատաբար հեշտությամբ են ընկալվում: Դրանց ուսուցումը հնարավորություն է տալիս ճանաչել առարկաներն ու երևույթները, համեմատել և հակադրել դրանց հատկանիշները: Օրինակ՝ մեծ-փոքր, բարձր-ցածր, բարձրանալ-իջնել, ուրախ-տխուր, առողջ-հիվանդ, խիզախ-վախկոտ, հին-նոր և այլն:

Ուսուցիչը կարող է դասարանում աշակերտներին հանձնարարել կատարելու վարժություններ: Աշակերտների ձեռք բերած գիտելիքներն ամրակայելու նպատակով կարելի է նրանց կատարել տալ հետևյալ վարժությունները.

ա. բացատրական բառարանում (դպրոցական) գտնել հոմանիշ բառերը.

բ. տրված բառախմբում որոշել և դուրս գրել հականիշ բառերը, օրինակ՝հին, մեծ, հաստ, երկար, գեղեցիկ, փոքր, բարակ, կարճ, տգեղ, նոր:

Կրտսեր դպրոցականներն իրենց խոսքում համեմատաբար քիչ հոմանիշներ են կիրառում: Պետք է հետևողական աշխատանք տանել, որ երեխաները հոմանիշները կիրառեն ոչ միայն բնագրերը վերարտադրելիս, այլև ինքնուրույն խոսքում:

[22]Ս. Խաչատրյան, Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013, էջ 4-5:

Բացի բառային աշխատանքից հոմանիշների ուսուցման ժամանակ կարելի է կիրառել նաև ընթերցանության մեթոդի բաղադրատարրերը՝

- զրույցը,
- բնագրի ընթերցումը,
- պատմումը,
- ամփոփումը:

Ամփոփելով՝ նշենք, որ հոմանիշների և հականիշների ուսումնասիրումը տարրական դասարաններում կազմակերպվում է մի քանի փուլով՝ բառագիտական հասկացությունների ուսուցում հատուկ դասաժամերի ընթացքում, բառագիտական աշխատանքների կազմակերպում ոչ բառագիտական դասանյութերն ուսուցանելիս: Աշակերտների բառապաշարը հոմանիշներով և հականիշներով հարստացնելու նպատակով կարելի է կազմակերպել բազմատեսակ քարտային աշխատանքներ: Տարրական դասարաններում գործնական առումով ուսուցանվում են իմաստով մոտ և հականիշ բառերը՝ առանց տերմիններն անվանելու և այդ հասկացությունները սահմանելու: Դա պետք է անպայման հաշվի առնել բառագիտական հասկացությունների էությունը պարզաբանելիս, դրանք սահմանելիս: Հոմանիշների և հականիշների ուսուցումը նպաստում է կրտսեր դպրոցականի բառապաշարի հարստացմանը, ինքնուրույն և ստեղծագործական գործնական կարողությունների զարգացմանը, վերլուծական հմտությունների դրսևորմանը, ստեղծագործության դաստիարակչական կողմի ընկալմանը, կրթության զարգացանը և այլն:

Տարրական դասարաններում բառապաշարի հարստացման ուղղությամբ աշխատանքն իրագործվում է մայրենիի դասագրքերում և ընթերցարաններում զետեղված բնագրերի ընթերցման ու վերլուծության ժամանակ: Կրտսեր դպրոցականների կապակցված խոսքի զարգացման, բառապաշարի համալրման մեթոդիկան պահանջում է նաև իրականացնել որոշակի աշխատանք աշակերտի բառապաշարը հոմանշային ու հականշային բառերով համալրելու և նրա խոսքը զարգացնելու ուղղությամբ: Հոմանիշների ու հականիշների ուսուցումն իրաանացվում է գլխավորապես բնագրերի ու դրանց հաջորդող վարժությունների հիման վրա առանց քերականական կանոնների սերտման:

ԳԼՈՒԽ 2. ԲԱՌԵՐԻ ՁԵՎԱԻՄԱՍՏԱՅԻՆ ԽՄԲԵՐԸ ՄԱՅՐԵՆԻԻ ԴԱՍԱԳՐՔԵՐՈՒՄ (ՀՈՄԱՆԻՇ, ՀԱԿԱՆԻՇ)

2.1 Հոմանիշ բառերի ուսուցումը տարրական դասարաններում՝ ըստ մայրենիների նյութի

Կրտսեր դասարանի դպրոցականների բառապաշարի համալրմանը նպաստում է հատկապես հոմանիշների ուսուցումը:

Տարրական դասարաններում հոմանիշների մասին տեսական գիտելիքներ չեն տրվում, սակայն գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման համատեքստում հնարավոր է լինում ընթերցվող բնագրում հոմանիշների առանձնացումով նպաստել աշակերտների բառապաշարի հարստացմանը: Նախ ուսուցչի օգնությամբ ընթերցվող բնագրում հայտնաբերում են հոմանիշները, այնուհետև ուսուցիչը՝

- ✓ պարզաբանում է հոմանիշների նրբերանգները,
- ✓ բացատրում է տվյալ բնագրում հոմանիշների ունեցած նշանակությունը,
- ✓ կատարվում է տվյալ բառի հոմանիշների ընտրություն և նրբերանգների բացատրություն,
- ✓ աշակերտները կատարում են վարժությունների հոմանիշների շուրջ,
- ✓ կազմում են նախադասություններ՝ բառերի հոմանիշները կիրառելով,
- ✓ կատարվում է խոսքային սխալների ուղղում (բառի ճիշտ օգտագործում), բառի փոխարինում այլ՝ տվյալ բնագրին մտքով առավել համապատասխան բառով:

Դիտարկենք օրինակներ (օր.՝ «Գտի՛ր ավելորդը՝ այգաբաց, մթնշաղ, առավոտ, ցերեկ, լուսաբաց» (Մայրենի 3, էջ 26)[23], «Բերան, երախ բառերը տեղադրի՛ր նախադասության մեջ» (էջ 41), «Խմբավորի՛ր իմաստով մոտ բառերը և գրի՛ր. կայտառ, բուրավետ, գեղեցիկ, չքնաղ, աշխույժ, քաղցրաբույր, ծիր, անուշաբույր, առույգ, հոտավետ, սիրուն, գեղանի: Քո կազմած խմբի բառերը հոմանիշներ են» (Մայրենի 3, էջ 43), «Տրված հոմանիշներից յուրաքանչյուրից ընտրի՛ր մեկ տառ և գտի՛ր գծապատկերում թաքնված այս բառերին հոմանիշ մի բառ» (Մայրենի 3, էջ 47) և այլն):

Դպրոց հաճախելու առաջին իսկ օրվանից մայրենի լեզվի դասերին այս կարողությունն աստիճանաբար զարգանում է: Թեև աշակերտները հոմանիշների հանդիպում են դեռևս

[23] Վ. Սարգսյան, Հ. Խաչատրյան, Կ. Թորոսյան, Ե. Ջիլավյան, Մայրենի. Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2010, մեջբերումներից հետո նշվում է համապատասխան էջը:

տարրական դասարաններում՝ այբբենարանի նյութերն ընթերցելիս, սակայն հականիշների շուրջ տարվող համակարգված աշխատանքն սկսվում է մայրենիի դասագրքերում զետեղված բնագրերի, այդ թվում՝ հեքիաթների, բանաստեղծությունների, պատմվածքների, առակների վերլուծությունից, որից հետո կատարվում են նաև հատուկ վարժություններ.

• բնագրում հանդիպած հոմանիշների ընտրություն, օր.՝ *«Բնագրից գտի՛ր նշված բառերի հոմանիշները. երախտամոռ, արթնանալ, անկուշտ, միայն, պարանոց, ջրալի, սապատավոր»* (Մայրենի 3, էջ 75), *«Վ. Համբարձումյանի մասին բնագրում գտի՛ր ունկնդրել, ընթերցել, շինել, փոել, ապշել բառերի հոմանիշները»* (Մայրենի 3, էջ 103), *«Բնագրից գտի՛ր միակ չառանձնացված բառի հոմանիշը»* (Մայրենի 4, էջ 47)[24]:

•բնագրում գործածված հոմանիշների ընտրություն և գործածում նախադասության մեջ, օր.՝ *«Գտի՛ր շողշողալ, հանկարծ, նորից, անթիվ, ցրել բառերի հոմանիշները, դրանք գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ» (Մայրենի 3, էջ 24), «Հ. Շիրազի բանաստեղծության մեջ հոմանիշ բառեր կան գործածված: Գտի՛ր դրանք և գործածի՛ր առանձին նախադասությունների մեջ» (Մայրենի 3, էջ 30),*

• նախադասության ամբողջացում հոմանիշներով *(«Նախադասությունների ընդգծված բառերը փոխարինի՛ր հոմանիշներով» (Մայրենի 3, էջ 50),*

• բառին համապատասխան հոմանիշի ընտրություն, իմաստի բացատրություն *(«Գտի՛ր ավելորդը. մեծ, հսկա, խոշոր, ամբողջ, ահագին, վիթխարի, աժդահա» (Մայրենի 3, էջ 50), («Գունատ, իղձ, կշտամբել, քաջալերել բառերի մեկից ավելի հոմանիշ գրի՛ր» (Մայրենի 3, էջ 47), («Յուրաքանչյուր բառաշարքից քամի բառին հոմանիշ երկու բառ առանձնացրո՛ւ» (Մայրենի 3, էջ 49), («Բանավոր բացատրի՛ր հետևյալ հոմանիշների իմաստային տարբերությունները» (Մայրենի 3, էջ 47),*

• հոմանիշների ընտրություն, զույգերի կազմում *(«Բառախմբից առանձնացրո՛ւ հոմանիշները» (Մայրենի 4, էջ 47), («Սյունակներից ընտրի՛ր և դեմ դիմաց գրի՛ր հոմանիշ բառը» (Մայրենի 4, էջ 49), («Առանձնացրո՛ւ և կողք կողքի գրի՛ր հոմանիշ բառերի վեց զույգ» (Մայրենի 4, էջ 49),*

•հոմանիշ դարձվածքների ընտրություն *(«Ընտրի՛ր հոմանիշ դարձվածքները» (Մայրենի 4, էջ 65):* Ինչպես նշում է Ջ. Գյուլամիրյանը, «դարձվածքները, որպես կանոն,

[24] Վ. Սարգսյան, Հ. Խաչատրյան, Կ. Թորոսյան, Ե. Ջիլավյան, Մայրենի. Հանրակրթական դպրոցի 3-րդ դասարանի դասագիրք, Երևան, 2009, մեջբերումներից հետո նշվում է համապատասխան էջը:

փոխաբերությունների բնույթ են կրում, այսինքն՝ հենվում են բառի բազմիմաստության, այլաբանության, նրա լրացուցիչ «կերպարային» նշանակության վրա: Այդ իսկ պատճառով դարձվածքների բացատրությունը պետք է անցկացնել ոչ միայն համապատասխան հոմանիշների օգնությամբ, այլև դարձվածքի շուրջ տարվող աշխատանքն ավարտել՝ դրանք օգտագործելով նախադասությունների և կապակցված խոսքի մեջ»[25]:

Նոր կամ անծանոթ բառերի, հոմանիշների մեծ մասը դասագրքի էջում տրված է լինում երկու անգամ՝ բառաշարքերում կամ նկարներով և կապակցված նյութի մեջ: Առաջին դեպքում ուսուցիչը բացատրում ու պարզաբանում է բառիմաստը, երկրորդ դեպքում՝ ստուգում իմաստի ըմբռնումը, իսկ եթե դարձվածքը միայն բառաշարքում է տրված, այն կարելի է շարժական տառերով կազմել ու կարդալ տալ, գործածել նախադասությունների մեջ և այլն:

Հոմանիշները, որպես կանոն, փոխաբերությունների բնույթ են կրում, այսինքն՝ հենվում են բառի նշանակության, կիրառության վրա: Այդ իսկ պատճառով հոմանիշների բացատրությունը պետք է անցկացնել ոչ միայն համապատասխան հոմանիշների օգնությամբ, այլև դրանց տարվող աշխատանքն ավարտել՝ դրանք կիրառելով նախադասությունների և կապակցված խոսքի մեջ:

Հոմանիշները հարստացնում են խոսքը, ուժեղացնում են նրա տպավորությունը, մտքի արտահայտչականությունն ու սրությունը: Այդ իսկ պատճառով էլ անհրաժեշտ է հետևողական աշխատանք տանել, որ երեխաները հոմանիշներն կիրառեն ոչ միայն կարդացած բնագրերը վերարտադրելիս, այլև ինքնուրույն կառուցած խոսքում:

Հայտնի է, որ համանիշները չեն փոխարինում մեկը մյուսին, այլ օգնում են ճշգրտելու, ավելի պարզ դարձնելու խոսողի մտքերը: Այսպես՝ *սուրբ, մաքուր, անարատ* բառերից Ս.Կապուտիկյանը «Իմ հայ լեզու» բանաստեղծության մեջ օգտագործել է *սուրբ* բառը: Այս սուրբ-ը չի կարելի փոխարինել *մաքուր, անարատ* հոմանիշներով: Փաստորեն դրանց օգնությամբ հասկանում ենք *սուրբ* բառի իմաստը և պատկերացում կազմում «գանձերով լի գանձատան բանալու» սուրբ լինելու մասին:

Հոմանիշների ուսուցումը տարրական դասարաններում իրականացվում է գործնական ճանապարհով՝ գլխավորապես հենվելով դասագրքում զետեղված գեղարվեստական բնագրերի վրա՝ սահմանափակ տեսական տեղեկություններ, սահմանումներ, քերականական եզրույթներ հաղորդելով: Օրինակների միջոցով, առանց քերականական եզրույթների ներկայացվում են

[25] Ջ. Գյուլամիրյան, Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, էջ 282:

հոմանիշի սահմանումը, գործածության առանձնահատկությունները, ոճական տարբերությունները: Օրինակ՝ բոլորը գիտեն *ուտել* բառը և գործածում են առօրյա կյանքում: Երբ ուզում ենք արտահայտել «ագահությամբ ուտել» իմաստը, *խժռել* բառն ենք գործածում, «հաճելի բան ուտել» իմաստի համար գործածում ենք *ճաշակել* բառը, իսկ *լափել* բառը՝ կենդանիների համար, երբեմն նաև մարդկանց համար, որոնք *անշնորհք* և *ագահաբար* ենք ուտում: Փաստորեն՝ հոմանիշների միջոցով կարողանում ենք նաև որոշակի վերաբերմունք արտահայտել:

Աշակերտները՝ որպես կանոն, խուսափում են նկարագրությունները վերարտադրելուց: Սակայն նկարագրական խոսքը հարուստ է ածականներով, մակդիրներով, հոմանիշներով, համեմատություններով, որոնք էլ հարստացնում, գեղեցկացնում են խոսքը: Ուստի պիտի կարևորել նաև նկարագրական խոսք կառուցելու կարողության ձևավորումը: Հեշտությամբ խնդիրը լուծելու համար ուսուցիչը պետք է ուղղորդի, որ երեխաները պատմելիս, խոսելիս կիրառեն հոմանիշներ և ամբողջությամբ վերարտադրեն կարդացած ստեղծագործության մեջ զետեղված նկարագրությունները:

Հոմանիշների ուսուցման ընթացքում պետք է ուշադրություն դարձնել դրանց **խոսքային և լեզվական** տեսակների տարբերակմանը: Կիրառական տեսանկյունից հոմանիշները դասակարգվում են նաև լեզվական և խոսքային խմբերի[26]: Լեզվական հոմանիշները լեզվի մեջ գոյություն ունեցող բառերն են, որոնք կարող են գործածվել լեզվի տարբեր ոլորտներում կամ գործառական բոլոր ոճերում, իսկ խոսքային հոմանիշներն ունեն կիրառության սահմանափակ ոլորտ: Դրանք ունեն հեղինակային բնույթ, հիմնականում գործածվում են գեղարվեստական գրականության մեջ և կոչվում են անհատական կամ հեղինակային հոմանիշներ[27]:

Հ. Թումանյանը պոեմում հոմանշային հարաբերությունների մեջ է դնում զանձ և գահ բառերը, որոնք խոսքաշարից դուրս հոմանիշներ չեն և տարբեր հատկանիշներ են ցույց տալիս: Դիտարկենք հատվածը.

Անց են կենում սեր ու խնդում,
Գեղեցկություն, **զանձ** ու **գահ,**
Մահը մերն է, մենք մահինը,
Մարդու գործն է միշտ անմահ[28]:

---

[26] Ա. Սուքիասյան, Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, էջ 70:
[27] Ս. Էլոյան, Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան,1989, էջ 140 -141:
[28] Հ. Թումանյան, Ընտիր երկեր 2 հատորով, հ. 1, Երևան, 1985, էջ 288:

Ընդգծված բառերը բանաստեղծական խոսքում ստացած կիրառության մեջ են օժտվել հոմանշային արժեքով և կիրառությունից դուրս հոմանշային հարաբերություն չեն արտահայտում: Խոսքային համանշությունը դրսևորվում է որոշ իմաստով հարաբերակից բառերի, իմաստային ինչ-որ չափով բացասական կամ դրական գնահատական ունեցող բառերի սահմաններում և, մասնավորապես՝ այսպիսի բառերի համատեղ գործածության պարագայում: Խոսքային հոմանիշներն այլ կերպ կարելի է անվանել համատեքստային հոմանիշներ :

Հասակով և **տեսքով, շունչ** և **հոգի** բառերը հոմանիշներ չեն, սակայն Հ. Թումանյանի տողերում ձեռք են բերում հոմանիշային արժեք, ինչպես՝

Ու կռվի դաշտում Շահի առաջին

Արին մի անգամ գովքը սիրունի.

Ներան՝ իր **տեսքով, հասակով,** ասին,

Չի հասնի չքնաղ հուրին Իրանի[29]:

Բառային աշխատանքի փուլի հաջորդ խնդիրն է ստուգել, թե արդյո՞ք երեխաները հասկացել են հոմանիշների իմաստը և կարող են օգտագործել խոսքում: Այդ նպատակով պիտի առաջարկել բառերը գործածել բառակապակցությունների, նախադասությունների, կապակցված խոսքի մեջ: Այս հնարը նպաստում է նորածանոթ բառերը խոսքում ըստ իմաստի ճիշտ գործածելու, այլ բառերի հետ կապակցություններ ստեղծելու կարողությունների ձևավորմանը: Այս նպատակով տրվող առաջադրանքները պետք է ձևակերպել այնպես, որ աշակերտները հոմանիշները ոչ թե պարզապես կիրառեն խոսքում, այլ իրականացնեն մտավոր որոշ գործողություններ (օր.՝ Ի՞նչ հոմանիշ բառերով է հեղինակը բնութագրել մեր լեզուն: Գրի՛ր կարմիրով գրված բառերի հոմանիշները և բառակապակցություններ, նախադասություններ կազմի՛ր):

Սա բառապաշարի հարստացման մի ուղի է, որի դեպքում նաև պարզ է դառնում, թե աշակերտներն արդյոք հասկանո՞ւմ են բառն ըստ ձևի ու իմաստի., կարո՞ղ են անծանոթ բառերը, հոմանիշները կիրառել խոսքում՝ ըստ դրանց նրբերանգների:

Ուսուցիչը աշակերտներին պետք է բացատրի, որ հոմանիշները միմյանց նկատմամբ դրսևորում են տարբեր՝ իմաստային, գործառական, ոճական-արտահայտչական, կապակցական և այլ տարբերություններ: Ընդ որում՝ համանիշների մի մասի ոճական

[29] Նույն տեղում, էջ 290:

կիրառությունների հիմքում ընկած է նրբերանգաիմաստային, մի մասի հիմքում՝ ոճական (ոճական–գործառական, ոճական – հուզաարտահայտչական), իսկ մյուս մասի հիմքում՝ միաժամանակ և՛ ոճական, և՛ իմաստային տարբերություններ:

Հոմանիշների և առհասարակ բառերի նպատակային գործածության վերաբերյալ կարելի է աշակերտներին, տալ տարբեր բնույթի հանձնարարություններ: Օրինակ՝ կարելի է տալ բառերի, այդ թվում՝ հոմանիշների շարք ու հանձնարարել գրել շարադրություն՝ դրանց օգտագործմամբ: Կարելի է առաջադրել նախադասություններ՝ որոշ բառերի բացթողումով և հանձնարարել՝ տրված հոմանիշներից առավել դիպուկներով լրացնել բացթողումները: Կամ՝ տալ տարբեր իմաստ ունեցող բառերի ցանկ և հանձնարարել՝ գտնել դրանց հոմանիշներն ու վերջիններս օգտագործել նախադասություններում: Օրինակ՝ 2-րդ դասարանում «Խորհրդավոր տերևը» պատմվածքից գտնել և գրել տրված բառերի համապատասխան հոմանիշները.

մեղմ	ճոճվել
փսփսալ	ծիծաղել
սիրուն	ուղղել
շուտ	ընթերցել

Կամ՝ տրված հոմանիշային շարքերով կազմել նախադասություններ.

Մարտ- կռիվ –պատերազմ –պայքար

գեղեցիկ –սիրուն- չքնաղ –գեղանի

պատմել- նկարագրել – հաղորդել –տեղեկացնել

միանգամից –հանկարծ –անսպասելիորեն –իսկույն

Երեխաների տրամաբանական մտածողության, վերլուծական-համադրական կարողությունների զարգացմանը մեծապես նպաստում են նաև հոմանշային շարքերի ուսուցումը: Այս շարքերի ուսուցումից հետո միայն հնարավոր կլինի հոմանիշների իմաստային նրբերանգները ըմբռնել տալ կրտսեր դպրոցում: Հայտնի է, որ հոմանիշները լեզվում հանդես են գալիս իմաստային շարքերով՝ երկանդամից մինչև բազմանդամ կառուցվածքով: Հոմանշային շարքերի էությունը ըմբռնելու համար պետք է աշակերտների մեջ զարգացնել դրանց տարբերակման կարողություններ, շահեկան է իրականացնել բառիմաստների հակադրության սկզբունքը:

Այսպիսով՝ բառապաշարի ձևավորումն ու զարգացումը մայրենիի դասի կարևոր բաղադրամասերից են: Ուսուցման գործընթացում հոմանիշների ուսուցման, բառապաշարը հոմանիշներով համալրելու, հարստացնելու հիմնական աղբյուրը ընթերցանությունն է,

ընթերցածի վերարտադրությունը և ուսուցչի խոսքը: Շատ կարևոր է նաև բառային աշխատանքը, որին նվիրված դասի պլան դիտարկենք:

Դասի պլան

Առարկա - Մայրենի

Դասարան - 2 - րդ

Ուսուցիչ -

Դասի թեման - <<Խաղաղության դասը>> Սուրեն Մուրադյան: Առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառեր:

Տիպը - Հաղորդման դաս

Նպատակը - Աշակերտները գաղափար կկազմեն, թե ինչ է խաղաղությունը, կսովորեն և կծանոթանան խաղաղության խորհրդանշանների հետ, կսովորեն այդ բառի հոմանիշները, բացատրությունը: Կկարողանան տարբերակել առարկա, գործողություն, հատկանիշ ցույց տվող բառերը: Կկազմեն նախադասություններ այդ բառերով: Կսովորեն ասույթներ խաղաղության մասին: Կկարողանան արտահայտիչ կարդալ և կարդացածը վերլուծել:

Ուսումնական պարագաներ - Դասագիրք, խաղաղության խորհրդանշաններ, նկարներ, քարտեր, տետրեր, մատիտներ, թղթեր, երաժշտություն, տե-սանյութ:

Մեթոդական հնարներ - Զրույց, մտագրոհ (խթանման փուլ), քառաբաժան (կշռադատման փուլ) , խաղային մեթոդներ

Խթանման փուլ-Զրույց՝ անրադարձ նախորդ դասերին, պատերազմ բառի հականիշը գտնել:Բացատրել այդ բառի իմաստը, ասել հոմանիշները, ասել մեկ բառով, թե ի՞նչ է ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ:

Խոսել խորհրդանշանների մասին.

_ Աղավնի - բանաստեղծություն

Տեսանյութ.

_ Ձիթենու ճյուղ

_ Մատներով նշանը

_ N և D տառերի համադրում, որը նշանակում է միջուկային զինադադար, կամ աղավնու ոտնաթաթ:

Իմաստի ընկալում -

Ոտանավոր խաղաղության մասնին

Ասույթներ խաղաղության մասին

Պիկասոյի <<Խաղաղության աղավնի>> կտավը

Բացել դասագրքերը , հիշել հեղինակին, խոսել նրա մասին, հիշել անցած ստեղծագործությունները:

Ընթերցել Սուրեն Մուրադյան՝ <<Խաղաղության դասը>>,

2-րդ անգամ կարդում են աշակերտները մաս-մաս և վերլուծում: Բացատրվում են անծանոթ բառերը, գրում են բառատետրում:

Ֆիզկուլտ դադար - Երգում են <<Խաղաղություն>> երգը...

Խմբային աշխատանք - Բաժանվում են քարտեր, որտեղ ասույթները խառնվել են, պետք է

գտնել, կարդալ և բացատրել:
Խաղ - 1-ին շարքը ասում է առարկա ցույց տվող բառեր
2-րդ շարքը ասում է այդ առարկայի հատկանիշը
3-րդ շարքը ասում է այդ առարկայի կատարած գործողությունն այնպես, որ միտք արտահայտի և դառնա նախադասություն:
Կշռադատման փուլ - Անդրադարձ կատարել խթանման փուլում գրված բառերին, ավելացնել սովորած պատկերներն ու բառերը: Քառաբաժան մեթոդով գրել.
Ի՞նչ գիտեի: Ի՞նչ սովորեցի:
Ի՞նչ տեսա: Ի՞նչ լսեցի:
Գնահատել ընթերցանության համար:

2.2 Հականիշ բառերի ուսուցման առանձնահատկությունները տարրական դասարաններում

Հականիշների ուսուցումը տարրական դասարաններում պետք է կազմակերպել մեթոդական **հետևյալ շղթայով:**

✓ Հականիշի առանձնացում, իմաստի բացատրում: Նշված խնդիրներն իրականացվում են ինչպես դասագրքի համապատասխան էջի տողատակում անծանոթ բառի բացատրությունը տալով, այնպես էլ դասանյութի մեթոդական կառույցում դրանց շուրջ տարվող բառակազմական, վերլուծական և այլ աշխատանքներով: Կիրառելի են նաև հետևյալ հնարները՝ հականիշի բացատրություն՝ առարկան, առարկայի կամ երևույթի նկարը ցույց տալու ճանապարհով, հականիշի իմաստի բացատրությունը նկարելով և այլն:

✓ Հականիշ զույգերի՝ նախադասության մեջ կիրառում:

✓ Նախադասության ամբողջացում հականիշներով:

✓ Բազմիմաստ բառին համապատասխան հականիշի ընտրություն:

✓ Հականիշ և հոմանիշ զույգերի կազմում:

Դիտարկենք օրինակներ.

- *Ո՞ր բառերն են «հակառակորդներ».*
- *Ուրախություն, պատերազմ, ատելություն, խաղաղություն, սեր, համարձակություն, տխրություն, վախկոտություն (Մայրենի 3, էջ 18):*

- *Բառերը բաժանի՛ր երկու խմբի: Խմբերը «դիր» կշեռքի նժարների վրա: Ըստ քեզ՝ ո՞ր նժարն ավելի ծանր կլինի:*
- ***Ճիշտ, ազնիվ, բարերար, սխալ, չարագործ, բարեկամ, թշնամի, անեծք, ազնիվ, օրհնանք*** *(Մայրենի 3, էջ 21):*
- *Արդարը, որ մազ դառնա, չի կտրվի, խարդախը, որ գերան դառնա, կկոտրվի (Մայրենի 3, էջ 21):*
- *Շարունակիր. բարձրանալ, իջնել, լավ-…, շատ-…, բարի-…, անխելք -…: Տրված բառերը և քո գրած բառերը հականիշներ են (Մայրենի 3, էջ 45):*
- *Ընդգծված բառերը փոխարինի՛ր հականիշներով և ստացված զվարճալի պատմությունը գրի՛ր տետրում:*
- ***Յուրտ*** *աշուն էր:* ***Մերկ*** *ծառի վրա մնացել էր մի չորացած տերև: Փչեց* ***ուժեղ*** *քամին: Այդ տերևն* ***ընկավ ներքև:*** *Նրան տեսավ* ***փոքր*** *ու* ***քաջ*** *մրջյունը: Մրջյունը մտավ տերևի տակ: Այնտեղ* ***չոր*** *էր և* ***տաք*** *(Մայրենի 3, էջ 45):*
- *Ըստ նկարների գտի՛ր հականիշ բառերը և գրի՛ր զույգերով (Մայրենի 3, էջ 45):*
- *Վանդակների փոխարեն տեղադրի՛ր ընդգծված բառերի հականիշները և ամբողջացրո՛ւ առածները:*

Քիչ *խոսիր, …..լսիր:*

Փոքրից *սկսի՛ր, որ հասնես…..:*

Խելոքին *մեկ ասա, …..՝ հազար ու մեկ:*

Լավ է ***գիտունին*** *գերի լինել, քան ….՝ սիրելի (Մայրենի 3, էջ 45):*

Բնագրի վրա տարվող աշխատանքի ժամանակ գրեթե բոլոր ուսուցիչներն ուշադրություն են դարձնում ոչ միայն հոմանիշ, այլև հականիշ բառերի վրա: Հականիշ բառերն իրենց վառ արտահայտչականությամբ, ասելիքի շեշտակիությամբ ու դիպուկությամբ միշտ էլ կենսունակ ոճական միջոց են եղել թե՛ հին, թե՛ միջին և թե նոր դարերի պոեզիայում ու արձակում: Այստեղ, բացի արտահայտչականության ու դիպուկության գործոնից, թերևս դեր ունի նաև սեղմության, համառոտության գործոնը, որը, բնականաբար, նվազ էական հանգամանք չէ:

<<Բառակազմություն>> թեման անցնելիս երկրորդ դասարանցիները ծանոթանում են պարզ, բարդ, ածանցավոր և բարդածանցավոր բառերին: Չի խանգարում երեխաներին բացատրել նաև, որ հականիշներ կազմվում են բառերի այդ տեսակներին ածանցներ ավելացնելով, ինչպես՝ չար-անչար, մաքուր –անմաքուր և այլն:

Հականիշների յուրացման, հականիշներով երեխաների բառապաշարը հարստացնելու, խոսքում դրանք տեղին օգտագործելու կարողության զարգացման նպատակով դասագրքերում հաճախ մեջբերվում են հականիշներով կազմված առածներ, ինչպես՝ *«Արդարը որ մազ դառնա՝ չի կտրվի, խարդախը, որ գերան դառնա՝ կկոտրվի» (Մայրենի 3, էջ 21), «Մոր օրհնանքը յոթ տերտերի անեծք կքանդի» (Մայրենի 3, էջ 28) և այլն:*

Հականիշները ոճական, արտահայտչական բավական մեծ դեր են կատարում լեզվում: Արտացոլելով արտաքին աշխարհի երևույթների, իրողությունների միջև դրսևորվող կապերն ու հարաբերությունները՝ նրանք լեզվի արտահայտչական կարևորագույն միջոց են և ամենալայն հնարավորություններ են ընձեռում՝ ամենաբազմազան համեմատություններ անելու, տարաբնույթ հակադրություններ ու հակասություններ արտահայտելու, ինչպես նաև խոսքը պատկերավոր, հմայիչ ու ազդեցիկ դարձնելու համար: Հականիշ բառերի հիմնական գործառույթը հակադրությունների համար իբրև լեզվական միջոց ծառայելն է:

Դիտարկենք օրինակներ մայրենիի դասագրքից.

- *Մի-մի տառ փոխելով՝ ստացել են հականիշը՝* ***լավ, վատ-վար-լար****, դու էլ նույն ձևով ստացի՛ր* ***փակ և սուր*** *բառերի հականիշները (Մայրենի 3, էջ 47):*



- *Տետրում գծի՛ր խաչբառը, գտի՛ր տրված բառերի հականիշները և լրացրո՛ւ /նոր, փակ, նուրբ, արագ, լայն, անգետ, սխալ/ (Մայրենի 3, էջ49):*



- Աղյուսակից գտի՛ր վեց զույգ հականիշ բառեր և գրի՛ր տետրում (Մայրենի 3, էջ 85):



- *Գրի՛ր տրված բառերի հականիշները: Ստացված բառերը դասավորի՛ր իրար հետևից: Ի՞նչ նախադասություն ստացվեց (Մայրենի 3, էջ 85):*
- *Գրի՛ր հականիշները.* ***փակել, բարձրանալ, սիրել, մեծանալ, գտնել*** *(Մայրենի 3, էջ 91):*
- *Գտի՛ր նկարներում պատկերված գործողությունների հականիշները (Մայրենի 3, էջ 107):*
- *Ընդգծված բառերը փոխարինի՛ր իրենց հականիշներով՝ ձևափոխելով համապատասխան գոյականները (Մայրենի 3, էջ 108):*



Հականիշ բառերի ուսուցումը մի առանձին դժվարություն չի ներկայացնում: Դրանք համեմատաբար հեշտությամբ են ընկալվում: Դրանց ուսուցումը հնարավորություն է տալիս ճանաչել առարկաներն ու երևույթները, համեմատել և հակադրել դրանց հատկանիշները: Օրինակ՝ **մեծ-փոքր, բարձր-ցածր, բարձրանալ-իջնել, ուրախ-տխուր, առողջ-հիվանդ, խիզախ-վախկոտ, հին-նոր** և այլն:

Աշակերտների բառապաշարը հարստացնելու նպատակով կարելի է առաջարկել նաև հետևյալ դարձվածքները, որոնք ժողովրդախոսակցական լեզվում շատ տարածված են և ունեն օրհնանքի և անեծքի իմաստ:

Այսպես՝ **Տունդ շինվի: - Տունդ քանդվի:**

Արևդ ապրի: - Արևդ մեռնի:

Աղ ու հացը հալալ լինի: - Աղ ու հացը հարամ լինի:

Կարելի է տալ նաև դարձվածքների հետևյալ շարքը՝ հականիշը որոշելու առաջադրանքով.

օրը ցերեկով

սեփական աչքերով նայել

երեսդ պարզ

աչքի լույս

Ուսուցիչը կարող է դասարանում աշակերտներին հանձնարարել կատարելու վարժություններ: Աշակերտների ձեռք բերած գիտելիքներն ամրակայելու նպատակով կարելի է նրանց կատարել տալ հետևյալ վարժությունները.

ա. բացատրական բառարանում (դպրոցական) գտնել հոմանիշ բառերը.

բ. տրված բառախմբում որոշել և դուրս գրել հականիշ բառերը:

Բացի բառային աշխատանքից հականիշների ուսուցման ժամանակ կարելի է կիրառել նաև ընթերցանության մեթոդի բաղադրատարրերը՝

- զրույցը,
- բնագրի ընթերցումը,
- պատմումը,
- ամփոփումը:

Այսպիսով՝ հոմանիշների և հականիշների ուսումնասիրումը տարրական դասարաններում կազմակերպվում է հիմնականում երկու փուլով՝ բառագիտական հասկացությունների ուսուցում հատուկ դասաժամերի ընթացքում և բառագիտական աշխատանքների կազմակերպում ոչ բառագիտական դասանյութերն ուսուցանելիս: Հոմանիշների, հականիշների ուսուցման ընթացքում անհրաժեշտ է կրկնել հնչյունաբանությունից և ուղղագրությունից, շարահյուսությունից և կետադրությունից նախորդ դասարաններում անցած դասանյութերը՝ այդ նպատակով օգտագործելով ինչպես դասագրքի վարժություններն ու առաջադրանքները, այնպես էլ ուսուցողական թելադրության նյութեր, առանձին տեքստեր, բառեր և այլն: Աշակերտների բառապաշարը հարստացնելու նպատակով կարելի է կազմակերպել բազմատեսակ քարտային աշխատանքներ: Տարրական դասարաններում գործնական առումով ուսուցանվում են իմաստով մոտ և հակառակ բառերը՝ առանց տերմիններն անվանելու և այդ հասկացությունները սահմանելու: Դա պետք է անպայման հաշվի առնել բառագիտական հասկացությունների էությունը պարզաբանելիս, դրանք սահմանելիս: Հոմանիշների և հականիշների ուսուցումը կրտսեր դպրոցում նպաստում է բառապաշարի հարստացմանը, ինքնուրույն և ստեղծագործական գործնական

կարողությունների զարգացմանը, վերլուծական հմտությունների դրսևորմանը, ստեղծագործության դաստիարակչական կողմի ընկալմանը, կրթության զարգացանը և այլն:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բառերի ձևաիմաստային խմբերի ուսումնասիրությունը տարրական դասարաններում հանգեցնում է հետևյալ եզրակացություններին:

1. Աշակերտի գրավոր և բանավոր խոսքը փոխկապակցված են: Մտքերը կապակցված ու առանց սխալների շարադրելու համար աշակերտը պետք է խոսի ճիշտ: Դրա համար էլ կարդալու դասերին, նյութի բովանդակությունը պատմելու և վերապատմելու ընթացքում անհրաժեշտ է համալրել աշակերտի բառապաշարը հոմանիշներով, սովորեցնել բառերի ու նախադասությունների կապակցման ձևերը, զարգացնել հոմանիշներով բարդ մտքեր արտահայտելու, նախադասություններ կազմելու ունակությունները, իսկ տեսական նյութը ծառայեցնել նախադասության մեջ բառերի կապակցության կանոնները սովորեցնելու խնդիրներին:
2. Հոմանիշների և հականիշների ուսուցումը նպաստում է ոչ միայն բառապաշարի համալրմանը, այլև ինքնուրույն և ստեղծագործական գործնական կարողությունների զարգացմանը, վերլուծական հմտությունների դրսևորմանը, ստեղծագործության դաստիարակչական կողմի ընկալմանը: Հոմանիշների ուսուցմանը նպաստում են զննական, խոսքային, գործնական, վերարտադրողական և ստեղծագործական, փոխգործուն մեթոդները:
3. Կրտսեր դպրոցի ուսումնասիրության ենթակա «Մայրենիի» դասագրքում հոմանիշների ուսուցումն իրականացվում է տարբեր թեմաներով բնագրերի ու բազմատեսակ առաջադրանքների միջոցով, որոնց շարքում հատկապես առանձնանում են բնագրի շուրջ կատարվող բառային և տեքստային առաջադրանքները: Լեզվական գիտելիքների ուսուցումը ևս կատարվում է բնագրի միջոցով: Բնագրի ընթերցումն ու լեզվական գիտելիքի հաղորդումը նպաստում են աշակերտի խոսքի, ստեղծագործական ու ճանաչողական ունակությունների զարգացմանը:
4. Վարժություններից օգտակար ու արդյունավետ պետք է համարել հատկապես կիրառական վարժությունները՝ ինքնուրույն կերպով հոմանիշներ, հականիշներ ընտրելու, հոմանիշների, հականիշների իմաստային, կիրառական տարբերությունները բացատրելու,

հոմանիշներով, հականիշներով տարբեր բառաքանակի նախադասություններ կազմելու առաջադրանքները, որոնք նպաստում են նախադասություն կազմելու կարողության զարգացմանը և բառապաշարի համալրմանը:

5. Հայոց լեզվի ուսուցման բոլոր փուլերում կազմակերպվում է աշակերտների բառապաշարի անընդհատ և շարունակական հարստացում հոմանիշներով, հականիշներով: Լեզվական նյութի ուսուցման առաջարկվող համակարգը դառնում է ելակետ՝ սովորողների՝ իրադրությանը համապատասխան կապակցված խոսքի զարգացմանը: Ուսուցման ժամանակակից, մասնավորապես՝ ակտիվ կամ փոխգործուն (ինտերակտիվ) մեթոդների և հնարների (մտագրոհ, մտքի քարտեզ, պրոբլեմային հարց և այլն) օգնությամբ ուսուցիչը կարող է մատչելի դարձնել լեզվական նյութի ուսուցումը՝ այն ծառայեցնելով աշակերտների խոսքի զարգացման և բառապաշարի համալրման կարևորագույն գործին: Նշված մեթոդների կիրառությունը հայոց լեզվի դասընթացում ապահովում է սովորողների գործուն մասնակցությունը ուսումնառության գործընթացին, ինչպես նաև պատկերավոր մտածողության, ստեղծագործական կարողությունների զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Աբեղյան Մ., Հայոց լեզվի տեսություն, Երևան, 1965, 699 էջ:
2. Աբրահամյան Ս., Հայոց լեզու: Բառ և խոսք, Երևան, 1978, 418 էջ:
3. Առաքելյան Վ., Խաչատրյան Ա., Էլոյան Ս., Ժամանակակից հայոց լեզու, Երևան, 1979, 485 էջ:
4. Ավագյան Վ., Բառագիտության ուսուցումը դպրոցում, Երևան, 1989, 224 էջ
5. Բագումյան Լ., Բանավոր խոսքի զարգացումը, «Մանկավարժական միտք», 2015, 4/59/, 484 էջ:
6. Գյուլամիրյան Ջ., Կարդալու կարողությունների և խոսքի զարգացումը տարրական դասարաններում, Երևան, 1998, 125 էջ:
7. Գյուլամիրյան Ջ., Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2006, 352 էջ:
8. Գյուլամիրյան Ջ., Մայրենիի տարրական ուսուցման մեթոդիկա, Երևան, 2015, 316 էջ:
9. Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1978, 326 էջ:
10. Էլոյան Ս., Ժամանակակից հայերենի բառային ոճաբանություն, Երևան,1989, 182 էջ:
11. Թումանյան Հ. , Ընտիր երկեր 2 հատորով, հ. 1, Երևան, 1985, 544 էջ:
12. Խաչատրյան Ս., Արտահայտիչ ընթերցանության և բանավոր խոսքի ուսուցումը տարրական դասարաններում, «Նախաշավիղ» հանդես, Երևան, 1.2013, 64 էջ:
13. Մարգարյան Ա., Ժամանակակից հայոց լեզու: Բառագիտություն, Երևան, 1993: 252 էջ:
14. Միրումյան Մ., Համանունների բառակազմական դերի ուսուցումը որպես խոսքի զարգացման դպրոց, «Հայոց լեզուն և գրականությունը դպրոցում», 2001, 259 էջ:
15. Շալունց Ռ., Հականիշ բառերը ժամանակակից հայերենում, Երևան, 1979, 180 էջ:
16. Շալունց Ռ., Համանուն բառերը ժամանակակից հայերենում. Լեզվի և ոճի հարցեր, հ. 4, Երևան, 1977, 76 էջ:
17. Ուշինսկի Կ., Մանկավարժական ընտիր երկեր, հ. 2, Երևան, 1950, 508 էջ:
18. Ջահուկյան Գ., Էդ. Աղայան և ուրիշներ, Հայոց լեզու, Երևան, 1980:
19. Սարգսյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., Մայրենի 2: Երևան, 2010, 161 էջ:
20. Սարգսյան Ս., Թորոսյան Կ., Խաչատրյան Հ., Ջիլավյան Ե., Մայրենի 3: Երևան, 2009, 352 էջ:

21. Սուքիասյան Ա., Ժամանակակից հայոց լեզու (հնչյունաբանություն, բառագիտություն, բառակազմություն), Երևան, 1999, 134 էջ:

22. Սուքիասյան Ա., Հոմանիշները ժամանակակից հայերենում, Երևան, 1971, 429 էջ:

23. Տեր-Գրիգորյան Ա., Խոսքի զարգացման մեթոդիկա. Տարրական դասարաններ, Երևան, 1974, 74 էջ:

24. Տեր-Գրիգորյան Ա., Հայոց լեզվի մեթոդիկա, Երևան, 1980, 562 էջ:

25. Покровский М., Избранные работы языкознанию, Москва, 1959. 82 էջ: